



9(702)  
2024

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԿՈՄԻՏԱՍ - 155



... Դու ամենայն Հայոց երգի  
Վեհափառն ես,

Դու՛ մեր երգի Մեսրոպ  
Մաշտոց,  
Գիրն ու տառն ես Հայոց երգի:  
Հայոց երգի  
Անձիր հերկի  
Ե՛վ ակոսն ու խորունկ առն ես,  
Ե՛վ մատընտիր սերմը նրա,  
Ե՛վ խոստունը գալիք բերքի...

Ե՛վ ծիրանի մեր այն ծառն ես,  
Որ ինչքան էլ ճղակոտոր՝  
Շտկըվել է ու բար տվել,  
Ու... մեր դարդը իրար տվել...

Ե՛վ հայրենի այն ծիծառը,  
Որ հավիտյան բույն է դրել

Մեր հոգու մեջ,  
Մեր կիսավեր ու դեռ կանգուն  
տաճարների  
Ու մեր երկնի գմբեթի տակ...

Դու՛ մեր տավիղ,  
Ե՛վ քո լարը  
Մինչև անգամ և հատվելիս  
Հայրենն է նորից ճնգում:

Դու՛ մեր սրտի ծայնալարը,  
Մինչև անգամ վիատվելիս  
Հայրենն ես դարձյալ տնքում...

Դու ես քարը  
Ե՛վ սրբատաշ մեր պատշարը.

Հացը օրվա  
Ե՛վ նեղ ժամի մեր պաշարը.  
Մեր փակ հոգին, բաց  
աշխարհը,

Սրբագործված մեր նշխարը.  
Ե՛վ մեր ճարը՝  
Օտարամուտ ախտի դիմաց.  
Խնկածավալ մեր տաճարը՝  
Օտարահոտ աղտի դիմաց.  
Վերադարձի մեր պատճառը՝  
Մեր հարկադիր գաղթի դիմաց.  
Համահավաք մեր համճարը՝  
Ազգասրբիյուք բայտի դիմաց...

Դու մեր հաստատ Մասիս  
սարը՝

Վստահելի թիկունքն ես մեր,  
Մեր երգերի Շովասարը  
Ու բյուրակյան ակունքն ես  
մեր,

Մեր արնոտված հավքի լեզուն,  
Մեր կարոտած ֆիդան յարը,  
Մեր լեփլեցուն հոգիների  
ծայնատարը,  
Մեր երգերի խաղը-նոտան-  
ծայնատառը

Չայնասրբիյուք կենդանի  
Ու ծայների թանգարանը,-  
Մեր հայկական երգարանը...

(Պ. Սևակ, «Անլուրի  
Չանգակատուն»)

## ՈՂՋՈՒՅՆԻ ՓՈԽԱՐԵՆ



Սիմոնյան, Արցախի կորստի ու ողբեր-  
գության խորքից շատ ավելի մոտ ու շոշա-  
փելի է դառնում անցյալը, անցյալի հետ  
շփումը՝ հանապազօրյա:

5-րդ դարի սկզբին լուսավորչական  
նպատակներով Հայոց Արևելից կողմանք  
եկավ Մեսրոպ Մաշտոցը և Ամարասի եպիս-  
կոպոսական դպրատանը մտցվեց հայերենի

ուսուցումը, իսկ Աղվանքի եպիսկոպոսա-  
նիստ բնակավայրերից մեկի՝ Պարտավի  
մոտ բացվեցին բարձրագույն հոգևոր դպ-  
րոցներ: Դարեր շարունակ Արցախը դպրոց-  
ները պահեց տներում, վանքերում, եկեղե-  
ցիներում, և պատկառանքը դպրոցի և կր-  
թության նկատմամբ պահպանվեց ու փո-  
խանցվեց անգամ օտար զավթիչների տի-  
րապետության ներքո: Կրթություն տարա-  
ծող օջախները հեշտությամբ ամբողջությամբ  
դարձան, ուսուցիչները՝ զինվորյալներ: Վա-  
չագան Բարեպաշտի ժամանակներից «երկ-  
րի հզորության ակունքը համարվեց կրթու-  
թյունը», իսկ դպրապետ և ուսուցչապետ  
բառերին պարտադիր ավելացավ հավա-  
տարիմ բնորոշումը:

Կրթությանն ու գիտությանը հավատա-  
րիմ լինելու լուսավորյալ գործն իր ոսկե-  
դարն ապրեց Շուշիի կրթական համակար-  
գով, որի ստեղծած արժեքները Անդրկովկա-  
սի թաթարները մոխիր դարձրին 1920 թվա-  
կանի կոտորածի ժամանակ: Խորհրդային  
70 տարիների՝ հանընդհանուր գաղափա-

րական պարտադրանքի, կրթելու և դաս-  
տիարակելու կենտրոնացված մոտեցումնե-  
րի պայմաններում ուսուցիչներն իրենց  
գրադարակներում պահեցին Բաֆֆու  
«Սամվելն» ու «Դավիթ Բեկը», Մուրացանի  
«Գևորգ Մարգարետունի», Սերո Խանգաղ-  
յանի «Մխիթար Սպարապետը»...

Արցախի ազգային ազատագրական  
շարժման օրերին աշակերտներն արյամբ  
գծեցին Հայրենիքի բնագծերը: Ու աշխարհի  
ոչ մի անկյունում ու ոչ մի խրամատում ու-  
սուցիչն ու աշակերտը միասին չէին կռվում,  
աշխարհի ոչ մի անկյունում ուսուցիչն աշա-  
կերտին կենդանի վահան չի դառնում, և աշ-  
խարհի ոչ մի անկյունում ուսուցիչը չի հու-  
ղարկավորում իրեն աշակերտած հայրիկին,  
ապա որդուն:

Սիրելի ուսուցիչ, աշխարհի և ոչ մի ու-  
սուցիչ Քեզ պես խաբված չէ, կարկամած ու  
այլայլված, պատրանքների մեջ ու մոլորյալ  
չէ: Բայց Դու կարող ես ուղղել մեջքը, որով-  
հետև արարչագործության մի պսակն էլ Դու  
ես, և որովհետև Քրիստոսն էլ ուսուցիչ էր:

Դուք համակ նվիրումով եք աշխատել,  
հանձնառու և հայրենամուտ եք եղել նաև  
2020 թվականի դաժան պատերազմից հե-  
տո՝ որդեկորույս և տնավեր դարձած, որով-  
հետև շարունակել եք մնալ պայքարի առա-  
ջապահը:

Սիրելի ուսուցիչներ, եթե դասավանդում  
եք Մայր Հայաստանի դպրոցներում, ապա  
ուժ և միայն ուժ քարոզեք, և տվեք այն գի-  
տելիքը, որն ուժ է բերելու Հայոց աշխար-  
հին, որով պատրաստ են լինելու տիրոջ  
զգացողությամբ ապրել այս հողում և ուժի  
լեզվով խոսել:

Գիտելիքով և ուժով ենք փրկելու գալի-  
քը, գիտելիքով և ուժով ենք փոխելու պատ-  
մության ընթացքը...

**Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆ**  
**Արցախի Հանրապետության ԿԳՄՍ**  
**Նախկին Նախարար,**  
**Երեսանի Հովի. Թումանյանի անվան**  
**թանգարանի տնօրենի ժամանակավոր**  
**պաշտոնակատար**

## ԵՐԲ ՌԻՍՈՒՅԻՉ ԵՍ



թյան, աշխատասիրության, հայրենասիրության և շատ այլ  
արժեքներ:

Իմ հայրենի գյուղի հանդեպ ունեցած անթաքույց սերն  
ու նվիրվածությունը առիավատչյան են այն գաղափարին,  
որ ՀԱՅՐԵՆԻԹԸ սկսվում է հենց իմ տնից:

Մանկուց շատ  
սիրել եմ ուսուցչի  
մասնագիտություն-  
ընդ, և դպրոցի ու-  
սուցչանոցն ինձ  
համար նման էր թա-  
գավորի դոյակի այն  
վերջին հարկի սեմ-  
յակին, որն անհա-  
սանելի էր:

Սիրել եմ սովոր-  
ել, նաև՝ սովորեց-  
նել:

Հենց մանկուց էլ  
իմ երակներում նե-  
րարկվել են պա-  
տա սխանատվու-  
թյան, աշխատասիրության, հայրենասիրության և շատ այլ  
արժեքներ:

Մտածում ես՝ արդյո՞ք խաբում ես ինքդ քեզ, թե պարզա-  
պես ՌԻՍՈՒՅԻՉ լինելու բնագղն է քեզ տանում ուսուցանե-  
լու, բացատրելու, մեկնաբանելու, հիմնավորելու, արժևորե-  
լու, արձատարելու...

Սիրելի՛ տեղահանված ուսուցիչներ, ամեն նոր ուսում-

Ինչպիսի՞ ապրումներ կունենա այն սովորող  
և սովորեցնող անձնավորությունը՝ ուսու-  
ցիչը, երբ տեղահանվելուց հետո պետք է մտնի  
դասարան և ուսուցանի Պարույր Սևակի «Քիչ  
ենք, բայց հայ ենք» հայտնի ստեղծագործու-  
թյունը: Այ քեզ ճակատագրի հեզմանք:

Մտածում ես՝ Սևակն այդ բանաստեղծու-  
թյունը գրել է Մեծ եղեռնից հետո, դու էլ պետք է  
ուսուցանես տեղահանումից հետո: Բայց տես-  
նես Սևակն ի՞նչ է մտածել վերնագիրն ընտրե-  
լուց առաջ: Հայ են ասում նրա համար, որ ամեն  
անպատասխանատու սխալի արդյունքին հար-  
մարվում է՞, թե՛ հայը պարզապես փյունի՞կ է:

Միևնույն է՝ պետք է ուսուցանես այն գաղափարը, որ  
գալիս է կանգնում կոկորդոմդ, չորացնում լեզուդ, առատ  
ջրով լցնում աչքերդ ու ցնցում հոգուդ մեջ արմատացած  
արժեքը՝ հայրենասիրությունը:

Մտածում ես՝ արդյո՞ք խաբում ես ինքդ քեզ, թե պարզա-  
պես ՌԻՍՈՒՅԻՉ լինելու բնագղն է քեզ տանում ուսուցանե-  
լու, բացատրելու, մեկնաբանելու, հիմնավորելու, արժևորե-  
լու, արձատարելու...

Սիրելի՛ տեղահանված ուսուցիչներ, ամեն նոր ուսում-



նական երևույթ՝ Առաջին զանգ, Վերջին զանգ և այլն, մեծ  
դժվարությամբ հոգու մեջ տեղավորող հայրենասիրության  
ջատագույններ, ՇՆՈՐՀԱՎՈՐ ՄԵՐ ՍԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՈՆԸ...  
Պարզապես անհոգ կյանք են մաղթում բոլորիս...

**Աննա ՊԵՏՐՈՍՅԱՆ**  
**Արցախի Հանրապետության ԿԳՄՍՆ տնօրեն,**  
**Արարատի մարզի Դուկասավանի միջնակարգ**  
**դպրոցի դասվար**



«ՈՍԿԵ ԴԱՐԱՆ»

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ՝ ՆՈՐՈՎԻ ՄԱՏՈՒՅՄԱՐ

Ամեն մի ժողովրդի համար, բնության ու մարդկության ճշմարիտ ծանոթության հետ միասին, իր ազգային ինքնաճանաչողությունն է իր ճանապարհի մթնոն տույս տվող լապտերը: **Հովհաննես Թումանյան**

Կրկին մարդաշատ էր երևանի «Հրաման Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանի Հովհաննես Թումանյանի ցուցասրահը: Հավանաբար այստեղ աշխատող մարդիկ չեն հասցնում ձանձրանալ, քանզի նրանց օրը միշտ հագեցած է լինում նորանոր նախաձեռնություններով:

Այս անգամ Թումանյանի թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը հանդես էր եկել ազգանպաստ ու ազգանվեր մի նոր նախաձեռնությամբ: Թիմային աշխատանքով, որում ընդգրկված են թումանյանասեր մկրտավետ՝ դերասան, նկարիչ, երգահան, թարգմանիչ, ասանդրոլ, ստեղծվել է Թումանյանի հեքիաթների «Ոսկե դարան» շտեմարանը՝ թումանյանական հեքիաթների և բանասիրական արժեքների տարածման ու հանրահռչակման առաջնություններով:

Այդ «Ոսկե դարան» բջջային հավելվածի շնորհանդեսն էր, որին հրավիրվել էին հայտնի դերասաններ, մշակութային աշխարհի մշակավոր դեմքեր, բարերարներ, աջակիցներ ու հյուրեր:

«Ոսկե դարան»-ում կարող եք գտնել Թումանյանի 22 հեքիաթ՝ տաղանդավոր դերասանների և մտավորականների ընթերցմամբ, երաժշտական ու ռադիո-ձևավորմամբ: «Ոսկե դարան»-ը թումանյանական պատուհան է դեպի մեծ աշխարհ:

Այս համարձակ նախաձեռնությունը Լուսինե Ղարախանյանի հեթանոսական շատ պատասխանատու քայլն էր ոչ միայն մայր հայրենիքի համոզմամբ, այլև իր կորուսյալ Արցախ աշխարհի հոգևոր արժեքների պահպանության գործում: Թումանյանի հեքիաթները հնչելու են ոչ միայն մայրենի լեզվով, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն և այլ տարբերակներով, այլև Արցախի մայրենի բարբառով, ինչի կենդանի օրինակը հնչեցրին արցախցի երեխաները միջոցառման ընթացքում:

Հաճելի ու ջերմ մթնոլորտում հայտարարվեց միջոցառման բացման մասին: Լուսինե Ղարախանյանը, ողջունելով հյուրերին Թումանյանի ցուցասրահում, ընդգծեց այն միտքը, որ, իրոք, հեքիաթների մեջ են առավել խորն արտահայտված Թումանյանի և՛ ազնվականությունը, և՛ հզոր երևակայությունը: Իսկապես, բոլորս մեծանում ենք այդ հեքիաթների հետ ու ապրում դրանցով: Եվ որտեղի՞ց իմանար հայ բանասիրական նյութերի այդ հրաշագործ ու անխոնջ մշակը, որ Քաջ Նազարը դառնալու է հայոց երգիծանքի գլխավոր դեմքը, Չախրոդ Փանոսը՝ հիմարության ֆենոմենը, Պոչատ աղվեսը փոխարինվելու է մի ամբողջ խրատանու, Չախախա թագավորը՝ անարժան ղեկավարի, Հազարան բլբուլը՝ կյանքն առավել գեղեցիկ դարձնելու խորհրդանիշի և այլն. շարքը կարելի է անվերջ շարունակել:

Մտահոգացումը հաճելի էր ու գրավիչ՝ ստեղծել մի «Ոսկե դարան» հավելված, որպեսզի երեխաները քաշեն իրենց բջջային հեռախոսների մեջ ու լսեն դրանք գեղեցիկ և գրագետ մատուցմամբ:

Դարանը (շտեմարան) սկսվում է 22 հեքիաթով ու շարունակություն կունենա

նա պապայում: Թումանյանը Արևելքն ու Արևմուտքը միավորող եզակի ու հրաշագործ գրող է: Այդ հավելվածով մեր հզոր Սփյուռքի երեխաները հնարավորություն կունենան վայելել Թումանյանին և՛ մայրենիով, և՛ անգլերենով ու ֆրանսերենով, Արցախի բարբառով, նաև ռուսաց լեզվով:

Մեր անփոխարինելի դերասաններն ու թանգարանի մասնագետները հոգացել են, որ խորքային Թումանյանը մատուցվի առավելագույնս պարզ ու մատչելի, հետաքրքիր ու հասկանալի:

Այնուհետև Լուսինե Ղարախանյանը ներկայացրեց ձայնարարանի ստեղծմանը մասնակցած անհատներին, երաժշտությունը ձևավորող Վահե Գրիգորյանին՝ որոշ հատվածներ ցուցադրելով ունկնդիրների համար:

Դերասանուհի Քրիստինեն խոստովանեց, որ հինգ տարեկանից է սկսել չփվել Թումանյանի հեքիաթներին, և այսօր իր համար մեծ պատիվ է դերասան ընկերոջ՝ Բաբկենի հետ մարմնավորել հանձարեղ գրողի անմահ հերոսներին:

Մասնագիտությամբ նկարիչ, հետա-

յանի հետ կապված անվանի դերասանը դեռ շատ մեծ ծրագրեր ունի, որոնց մասին գերադասեց առայժմ լռել: Մի կողմից մենք դառնանում ենք Թումանյանի հետ իր դառնացած ժողովրդի պես, մյուս կողմից էլ հպարտանում ենք, որ ունենք նրա պես հանձարեղ գրող:

Արցախցի Արմանի ու Անիի Արցախի բարբառով ասունքը («Անհաղթ աքլոր») ավելի տպավորիչ դարձրեց միջոցառումը ու արժանացավ բուռն ծափահարությունների. չէ՞ որ Արցախի բարբառը և կործանման ու անհետանալու վտանգի տակ է:

Երգահան Վահե Գրիգորյանը, որը հեքիաթների երաժշտական ձևավորողն է, և իր երախտագիտությունը հայտնեց կազմակերպիչներին՝ այդ լուրջ ու պատասխանատու գործը իրեն վստահելու համար:

Պարսկահայ համայնքի ներկայացուցիչը և երախտագիր է՝ հեքիաթներին նոր գույն ու երանգներ հաղորդելու գործը իրեն առաջարկելու համար:

Բոլոր ելույթ ունեցողներն անխտիր հավանության արժանացրին գեղեցիկ



գայում դերասան Վարդան Պետրոսյանը շեշտեց, որ Թումանյանի մասին խոսելիս բառերն ինքնին հորդում են մեր շուրթերից, քանի որ նա ոչ միայն մեծ գրող է, այլև մեծ փիլիսոփա, որն այնքան է գնացել պատմության խորքերը, որ կարողացել է պեղել մեր ազգային խնդիրները: Որպես նկարիչ՝ Վարդան Պետրոսյանը Թումանյանի հետ առնչվել է իր «Քաջ Նազարը» նկարով, որը ներկայացվել է ցուցահանդեսում: Նրա խոսքով՝ Թումանյանն այնպիսի կողեր է բացահայտում մեզ համար, որ կարողանում ենք ծանաչել ինքներս մեզ: Վերցնենք, օրինակ՝ «Կիկոսի մահը» հեքիաթը: Ինքներս մեզ համար չեղած տեղից ողբերգություն ու խնդիրներ ենք հորինում ու դրանք իրացնում կյանքում: Կամ վերցնենք «Բարեկենդանը» հեքիաթը. ամուսինը կնոջն է ասում՝ շաշ, կինը՝ ամուսնուն: Սա այսօրվա մեր իրականությունն է, երբ բոլորս իրար մեղադրում ենք, բայց ոչ մեկն էլ չի ասում, թե ինքը մեղավոր է: Դրա համար էլ այսօրին ենք: Մեր երկիրը ձեռքից գնում է, բայց ոչ մեկը իրեն մեղավոր չի համարում: Թումանյանը կարողավել՝ մենք ճանաչում ենք մեզ ու կարող ենք փոխվել:

Ընդհանրապես ժողովուրդները կողավորված են իրենց ժողովրդական հեքիաթներում, ու դա շատ բնական է: Ունեցվածքը, հարստությունը երբեք չպետք է գերադասել. կարող ես դա կորցնել, բայց հետագայում ձեռք բերել այն, իսկ եթե նախընտրում ես ունեցվածքը, քեզանից հետո ո՞նք է պետք այդ հարստությունը:

Վարդան Պետրոսյանը խոստովանեց, որ երբ իրեն առաջարկվեց ներկայացնել Թումանյանի հեքիաթների ֆրանսերեն տարբերակը, շատ պարտավորված զգաց, ու մեծ ջանք պահանջվեց իրենից: Եթե իր արած գործը երեխաներին դուր գա, ապա, ինքնուրուից, մեծերին էլ դուր կգա: Համոզված է՝ իր «խենթությունները» անպայման դուր կգան երեխաներին: Թուման-

ու հաճելի նախաձեռնության գաղափարը: Խրախուսական ջերմ խոսքերից ավելի էր ոգևորվել թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը, որը չէր կարող թաքցնել իր գոհունակությունն ու երախտագիտությունը իր գաղափարը սատարողների հանդեպ: Նա հուշամեդալով և շնորհակալագրով պարգևատրեց բոլոր հովանավորներին:

1. Գլխավոր հովանավոր Հայ կրթական հիմնադրամին՝ խոշոր ներդրումների և լուսավոր առաքելության համար: Հիմնադրամի ներկայացուցիչն էլ իր հերթին շնորհակալություն հայտնեց՝ իրենց աշխատանքը գնահատելու համար, և իր պատրաստակամությունը հայտնեց այսուհետև և նման կրթական ծրագրերին սատարելու գործում:

2. Ֆրանսիայի համայնքի ներկայացուցիչն, որը ևս իր գոհունակությունը հայտնելով մեզ, որ ինքը ֆրանսախոս էր, և հայերեն սովորելուն նպաստել է իր հայուհի կինը, որի հետ 20 տարի է՝ ամուսնացած է: Նա ուրախությամբ հայտնեց, որ այսուհետ հայ երեխաները, որոնք հայերեն չգիտեն, հնարավորություն կունենան այդ հավելվածի միջոցով չփվել Մեծն Թումանյանի հետ:

3. Ռոստոմի համայնքի ներկայացուցիչ Տանյային, որը Դոնի «Հայ երիտասարդական միություն» ՀԿ անդամ է: Գաղափարական ծրագրերի նորանոր նախաձեռնություններին ճարտարապետ Լուսինե Ղարախանյանը համոզված է, որ այս հավելվածը ազգանպաստ դերակատարություն է ունենալու մեր սերնդի հայեցի դաստիարակության ու հայապահպանության գործում:

Իրոք, «Ոսկե դարան»-ը Թումանյանի հեքիաթների խորը, անձայր, հարուստ ու շքեղ բանալին է, որը դեռ շատ «փակ դռներ» է բացելու:

Նորովի բացահայտենք մեր տաղանդաշատ գրող, հանձարեղ մտածող Հովհաննես Թումանյանին: Օգտվենք «Ոսկե դարան» բջջային հավելվածի հնարավորություններից, որի QR կոդը կարող եք գտնել համացանցում:

Հանդիպում

50 ՏԱՐԻ ԱՆՑ

50 տարիների ընթացքում անհնարին թվացող ցանկալի հանդիպումը կուրսեցիներով օրեցօր դառնում էր հնարավոր, ու մենք սրտատրոփ այդ հանդիպմանն էինք սպասում:

Արցախի բռնի տեղահանումից հետո ավելի շատ սկսեցինք իրար փնտրել ու կարողացանք կապ հաստատել:

2020 թվականից հետո, երբ Քարվաճառն էլ նվիրեցին թշնամուն, ոմանք մնացին Հայաստանում, որոշներն էլ սփռվեցին օտար ափերում (հայի բախտ...): Քոչվորները եկան, թալանելով տիրոջ իրավունք վաստակեցին, բնիկներն էլ քոչվոր դարձան (աշխարհ եմ ասել, է՛է՛է՛է՛... արդար դատող ու ուշադիր...):

2023-ի սև սեպտեմբերյան դեպքերից հետո հիմնովին դատարկվեց Արցախը բնիկ հայերից, ու մենք դարձանք քոչվոր. քոչվոր՝ մայր հայրենիքում, քանզի այդ հայրենիքում մենք չստացանք այն սերն ու ջերմությունը, ինչ մենք ունեինք միմյանց հանդեպ Արցախ աշխարհում: Ավելին, արհամարիված էինք ու անտարբերությունից խոցված: Մենք ավելորդ բեռ էինք, հայրենիքի հաշվին ապրող «տգուրկներ»: Այդ վերաբերմունքից մեր ցավն ավելի էր խորանում, վերքը՝ նորոգվում, կարոտը՝ ահագնանում...

Այս պայմաններում կարեկցանքը, օժանդակությունն ու աջակցությունը դառնում էին կենսական պահանջումը. չէ՞ որ գրկված ու հայրենակարոտ, 10 ամիս շարունակ շրջափակման դաժան գրկանքները ճաշակած արցախցուն միտքերից ու սփո-



փիչ խոսքն էլ բավական էր, որ հոգու թեթևություն զգար (անհնարին թվացող մի բան):

Ու ահա զանգեր, փնտրտուքներ ծանոթների ու բարեկամների, ընկերների ու հարևանների, որոնց ճակատագրի հզոր իններորդ ալիքը ուղղակի շարժել էր աչք ու ձայն և թողել բախտի քմահաճույթին: Գտնվեցին բարի, կարեկից ու մեծահոգի մարդիկ մեր ընկերներից: Կուրսը ներքինից ոմանք կրկնակի, եռակի գաղթականի փորձ ունեին արդեն, և հենց նրանք էլ առաջինը սկսեցին փնտրել կուրսը ներքինն ու աջակցություն առաջարկել: Թող Աստված նրանց պահապան լինի:

Ի վերջո, երբ փորձում էինք «հաշտվել» մեր վիճակի հետ, հեռախոսակապ հաստատեցինք իրար հետ ու որոշեցինք հանդիպել (քանի հոգով հնարավոր էր) 50 երկար ու ծիգ տարիների բաժանումից հետո: Սկզբում մտածեցինք մի տեղ հավաքվել, նստել ու խոսել մեզ բաժնի հասած դառն ու անուշ օրերից, սակայն հետո առաջարկ եղավ օգտվել որևէ շրջագայության խմբի ծառայություններից՝ օրն ու հանդիպումը ավելի հետաքրքիր ու հաճելի դարձնելու համար: Ընտրեցինք Հառիճավանք, Գյումրի (քաղաքային տուր) ուղղությունը և չփոխեցինք, մանավանդ որ մեր ընկերուհիներից մեկը համոզված էր Գյումրիում ու այնտեղ պետք է միանար մեր խմբին:

Շրջագայությանը նախորդող գիշերը ոչ մեկս չէր քնել. անընդհատ պատկերացում էինք մեր մոտալուտ հանդիպումը. 50 տարվա ընթացքում ով ինչքան էր փոխվել, կճանաչե՞ի՞՞ք, արդյոք, իրար 50 տարի անց, ճակատագիրը ում ինչ անակնկալներ է մատուցել... Խառնիճաղանջ մտքերը խռնվել ու հանգիստ չէին տալիս մեզ:

Վաղ առավոտյան հավաքվեցինք երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի բակում. այնտեղից պետք է շարժվեինք: Պահը շատ հուզիչ էր: Մեկ-մեկ ժամանում էին մեր ընկերուհիները. նայում էինք մեկս մյուսին՝ փորձելով կռահել՝ ով է կանգնած դիմացը: Եվ գրկախառնություններ, բացականչություններ, արցունքախառն ժպիտներ՝ շաղախված կարոտի ու ցավի երանգներով:

Վերջապես բոլորս «ճանաչեցինք» իրար, ավտորես նստեցինք իրար շատ մոտիկ, ու բացվեց պատմությունների կոփակ: Հիշեցինք մեր ուսանողական տարիները, ընկերներին, որոնք այլևս չկան (լույս իջնի նրանց հոգիներին), նրանց, որ հեռու են ու չկարողացան գալ այս հանդիպման, նրանց, ովքեր առողջական խնդիրների պատճառով չմիացան մեզ, հիշեցինք մեր երջանակահիշատակ դասախոսներին ու նրանց դասախոսությունները: Վերջ չունեին պատմությունները...

Առաջին կանգառը Ապարանում էր՝ Գնթունի սննդային կետում, որտեղ նախաճաշեցինք ու շարունակեցինք ճանապարհը դեպի Հառիճավանք: Վառքային այս համալիրը հայկական ճարտարապետական արվեստի շատ յուրօրինակ նմուշ է: Մեզ ուղեկցող զբոսավարը՝ Հայկը, ամենայն մանրամասնությամբ ներկայացնում էր կոթողի պատմությունը: Վառքը կառուցելիս օգտագործվել են տարբեր երանգների քարեր, որի շնորհիվ վառքի պատերը անսովոր գեղեցիկ տեսք են ստացել:

ԵՐԳՈՂ ԱՐՑԱՆ

ԱՐՑԱՆԸ՝ ԿԱՄԵՐԱՅԻՆՈՒՄ

«Երգում ենք, որ մեր երգի տա- տանունները հասնեն Արցախի հո- դին, ու նա զգա, որ ուր էլ լինենք, մեր սրտերը տրոփում են իր շնչառու- քյան կշռույթով»:

Զաքար Քեչիշյան

Սեպտեմբերի 13-ին Երևանում՝ Կոմիտասի անվան կամերա- յին երաժշտության տանը, տեղի ու- նեցավ իր երկրամասի բացառիկ հա- մերգ: «Երգող Արցախ» խորագիրն էր կրում «Վարանդա» մանկական երգչախմբային համերգը, որի հովա- նավորն է Արևելյան Ամերիկայի Կի- լիկյան թեմի առաջնորդարանը: Շուշիի «ՎԱՐԱՆԴԱ» երգչախմբի հիմնադիր Զաքար Քեչիշյանի ղեկա- վարությամբ արցախցի շուրջ 60 մա- նուկներից կազմված երգչախումբը (ղաշնակահար՝ Նադեժդա Յարու- քյունյան) հանդես եկավ մոտ 2 տասնյակ երգերով՝ սկսելով Կոմի-

րումներով մեզ մտովի Արցախ տա- րան՝ Շուշի, որտեղ 32 տարի առաջ Զ. Քեչիշյանը, գալով Լիբանանի Այն- ճար քաղաքից, հիմնեց «Վարանդա» երգչախմբերը՝ մանկական, պատա- նեկան և երիտասարդական: Նա այդ ժամանակ ուսանում էր Երևանի Կո- միտասի անվան պետական կոնսեր- վատորիայում՝ շվիտար, դուդուկա- հար ու խմբավար: Շուշիի Արան Մա- նուկյանի անվան վարժարանում էր հիմնելով «Վարանդա» երգչախում- քը՝ ուներ նպատակ, որ արցախցի մանուկն այլևս չարտասվի, չտեսնի պատերազմ ու այլ արհավիրք: Շատ էր կարևորում հատկապես հոգևոր սնունդն արցախցի մանուկների, պատանիների ու երիտասարդների կյանքում: Հետագայում «Վարան- դա»-ն ստացավ պետական կարգա- վիճակ: Ունեցել է 200-ից ավելի հա- մերգներ Արցախի տարբեր շրջաննե- րում, մայրաքաղաքում, գործասե-

«Այս պահին սեպտեմբերի 2-ի հետ- միջոցն է: Առավոտյան այցելեցինք Եռաբլուր, ուր նման են մեր նահա- տակները, նրանց շարքին՝ «Վարան- դա»-ի նախկին սաներ, նախկին սա- նուկների եղբայրներ ու անուսին- ներ, ներկա սաների հայրեր ու հա- րազատներ...»,- նոր համերգի առ- փով գրել է Զ. Քեչիշյանը:

2020թ. պատերազմից հետո էլ «Վարանդա» երգչախումբը շարու- նակեց գործել, չնայած հայրենի Շուշիի անկմանը: 2021 և 2022թթ. Ստեփանակերտում երգչախումբը 120 սաներով կազմակերպել է «Եր- գող Արցախ» երգչախմբային համեր- գաշարը, որի շարունակությունն է արդեն Երևանում իրականացվողը: Այս անգամ Երևանում հանդես եկան մանուկները ու մեծ հուզմունք, կա- րոտ, երազանք ու նպատակ պար- տադրեցին մեզ՝ ավագներին: Յու- րաբանչյուր երգից հետո ծափերը երկար էին հնչում. Արցախը կանչում էր: Մանուկների կողմից կատարած երկրորդ երգը՝ «Ժամանակներն ենք Արցախի», պահանջ էր, կանչ դեպի երկիր: Յուրի Սահակյանի խոսքերով գրված «Երկիր իմ Հայաստան» երգի երաժշտությունը Տիգրան Մանսուր- յանին է, որը ներկա էր համերգին: Հնչեց նաև Մուշեղ Իշխանի խոսքե- րով գրված «Հայ հոգին» երգը՝ Ար- մենուհի Կարապետյանի երաժշտու- քյամբ: Ու էլի երգեր՝ արցախյան մա- նուկների շուրթերով: Ուրախ ու բարձր տրամադրություն էին ապա- հովում դահլիճում կատակերգերը՝ «Խոզուկին զանգատը», «Քաջ Նա- զար» և այլն: «Պարոն Զաքարն ու 40 սատանաները» կատակերգը խմբի ու խմբավարի մասին էր, որը, հիրա- վի, ուրախ էր, և որի կատարման ըն- թացքում պարոն Զաքարը չդիմա- ցավ ու, իբր նեղացած, հեռացավ բե- մից, իսկ նրա փոխարեն դիրժոթի պարտակամությունները կատարեց երգչախմբի անդամներից մեկը:

Համերգի ընթացքում Զ. Քեչիշյա- նը հանդիսատեսին էր ներկայաց- նում նաև իր հյուրերին՝ Դանիել Երաժիշտ, արցախցի գրող Դավիթ Միքայելյան, ուրիշներ: Ընդհակա- լություն հայտնեց բոլոր աջակիցնե- րին, երգչախմբի համար երգեր գրողներին:

Ավարտվեց համերգը, բայց եր- կար ժամանակ դահլիճում էին հան- դիսատեսներն ու օրվա հերոսները: Այդքան արցախցիներ մի տեղում չէին եղել արդեն մեկ տարի է: Ողջա- գուրվում էին, տխրում, հուզվում, հիշում երանելի օրերը: Այստեղ էին Արցախի Հանրապետության մշա- կույթի նախկին նախարարներ Նա- րինե Աղաբալյանն ու Լեռնիկ Հով- հաննիսյանը, գրողներ, կրթության ու

վեցին, ասաց. «Զաքար, մեզ նորից Շուշի տարար...»: Շուշիի շրջանա- յին բուժմիավորման երկար տարի- ների տնօրեն Վիգեն Խաչատրյանը ցավով է հիշում՝ ինչքան սիրով է հայրենի քաղաքում ներկա եղել «Վարանդա»-ի համերգներին: «Վա- րանդա» երգչախումբը Շուշիում հա- մերգով հանդես էր գալիս նաև բեր- դաքաղաքում գործող «Նարեկացի» կենտրոնում, որի հիմնադիր Նարեկ



տասի «Հայր մեր»-ով, ավարտելով Արցախի օրհներգով, որի հզոր խոս- քերի հեղինակն է երջանակափառ- տակ Վարդան Հակոբյանը: Լեվի- ցուն դահլիճում ներկա էին շատ ար- ցախցիներ, որոնք ստիպված լքել են հայրենի տունը և այժմ բնակվում են Երևանում, ՀՀ այլ վայրերում: Հան- դիսատեսի շարքերում ներկա էին նաև ՀՀ մշակութային գործիչներ՝ երաժիշտներ, այլ բնագավառների ներկայացուցիչներ: Մոտ մեկ ու կես ժամ տևած համերգի ընթացքում ար- ցախցի փոքրիկներն իրենց կատա-

րում, ՀՀ մարզերում, Երևանում, Լի- բանանում:

Զ. Քեչիշյանը, բացի «Վարան- դա»-ից, ստեղծել է նաև Լիբանանի Համազգային «Կարկաչ» մանկա- պատանեկան ու «Այգ» երիտասար- դական երգչախմբերը, որոնց հետ համերգներով հանդես է եկել «Վա- րանդա» խումբը: Տարիների ընթաց- քում 600-ից ավելի պատանիներ ու երիտասարդներ են եղել «Վարան- դա» երգչախմբում: Արցախյան հե- տագա գոյամարտերում երգչա- խումբն էլ ունեցավ կորուստներ:



մշակույթի բնագավառների, լրատ- վական դաշտի ներկայացուցիչներ: Արցախում բոլորն են ճանաչում Մի- քայել Հաջյան հայտնի ռադիոլու- րագրողին, որի 2 որդիները նահա- տակվեցին Արցախյան 2016 և 2020 թ. պատերազմներում: Մի առիթով Մ. Հաջյանն ասել է. «Նորայրս աջ թև էր՝ հատվեց, Երվանդա՝ ծախ թևս, հատվեց նույնպես...»: Այսօր նա չի կարող նաև որդիների շիրիմին այցե- լել: Բայց դիմանում է. «Վարանդա»- ի մանուկներն ուժ տվեցին նրան: ԵՊՀ արևելագիտության ֆակուլտե- տի նախկին դեկան Գուրգեն Մելիք- յանը 1988-ից մշտապես Արցախում էր ու Արցախի հետ: Խաղաղության տարիներին ստեղծել էր «Գուրգեն Մելիքյանի» Քաջաթաղի բազմազա- վակ ընտանիքներին՝ հիմնադրամը: Տարիների ընթացքում նույն հիմ- նադրամը մեծ օժանդակություն ցու- ցաբերեց Արցախին: Այսօր էլ նրա ղեկավարած հիմնադրամը դարձյալ արցախցիների հետ է: Գ. Մելիքյանը մոտեցավ Զ. Քեչիշյանին, ողջագուր-

Հարությունյանը նույնպես ներկա էր համերգին: Տեղացող անձրևն էլ դարձավ պատճառ, որ ավելի շատ շփվեց միմյանց հետ հանդիսատե- ներն ու Զաքարը, երգող մանուկնե- րը: Ու կար հավատ տունդարձի... Ճանաչված կիճոռեժիստ Սամվել Թադևոսյանի հետ տուն եկա, Ար- ցախյան գոյամարտերում մարտի- րոսված բազում տղաներին մվիր- ված ֆիլմեր է նկարահանել՝ «Խո- նարի հերոսներ» խորագրով: Հիշում է Շուշիում մի քանի անգամ է ներկա եղել «Վարանդա»-ի, այլ խմբերի համերգների. այսօրվանը այլ էր...

Հ.Գ. Զ. Քեչիշյանն իր խոսքում գրել է նաև. «Իսկ այս տարի ինձ թույլ կտան անձնական մի գեղում. Շուշիի Սուրբ Ղազանցեցոցում մեր պա- կադորության 20- ամյակի առիթով՝ այս համերգը նվիրում են ամբողջ մի քսանամյակ արցախյան առաքելու- թյունս ինձ հետ կիսած տիկնոջս՝ Կամիլային»:

Զ. ՈՒՔՈՅԱՆ

50 ՏԱՐԻ ԱՆՑ

3 Այս հուշարձանը միջնադարյան ճարտարապետության գոհարներից է՝ պարուրված նուրբ զարդաքանդակներով: Վանքը նաև եղել է գիտության կենտրոն: Այն- տեղ գործող հայտնի դպրոցում 1887-1889թթ. սովորել է մեծանուն Վարպետը՝ Ավետիք Իսա- հակյանը:

Ողջ ճանապարհին Հայկի պատմություն- ները սիրով ու հետաքրքրությամբ էինք լսում: Անցնում էինք մայր հայրենիքի տեսարժան վայրերով՝ մեր հոգում ու սրտում, սակայն, ու- նենալով կորուսյալ Արցախի վանքերն ու գողորհիկ անկյունները: Հիշեցի մեծ բանաս- տեղծի հայտնի խոսքերը.

Հիմա ո՞վ է ձեզ է համբուրում Ծովասարիս ծաղիկներ, Ի՞նչ որսկան է ձեզ ցած բերում, Ի՞մ Սիփանի եղնիկներ...

Հիմա Արցախիս սուրբ վայրերով վաչկա- տուն ու վայրի ցեղերն են քայլում ու պղծում դրանք. ցավս դրանից բազմապատկվում է:

Հառիճավանքի մասին ավանդություննե- րից մեկի համաձայն՝ իշխանական օրիորդնե-

րից մեկը, սելջուկներից փախչելով, պատս- պարվել է ժայռի վրա կառուցած մատուռում, և երբ սելջուկները փորձել են տիրանալ օրիոր- դին, ժայռը երկու մասի է բաժանվել. նման հրաշքից վախեցած՝ սելջուկները մի կողմ են քաշվել, և օրիորդը փրկվել է:

Հաջորդ կանգառը Գյումրիի տարածքում գտնվող Սև բերդի մոտ էր: Ամրոցը կառուցվել է 1834 թվականին: Անիի ստորաձայն կա- ռույցների նման Սև բերդի համար նույնպես ստորգետնյա ուղիներ են եղել դեպի ներկայիս Մայր Հայաստան հուշարձանը և Կարմիր բեր- դը: Բերդի կառուցման անհրաժեշտությունը ծագել է ռուս-պարսկական երկրորդ պատե- րագմի ավարտից հետո: Թուրքիայի դեմ հնա- րավոր պատերազմը հաշվի առնելով՝ ռուսնե- րը սկսեցին հատուկ ուշադրություն դարձնել Գյումրու ամրացմանը: Ու կառուցվեց բերդը՝ որպես կարևորագույն ռազմական հենակետ: Երբ 1877-1878թթ. Բալկանյան պատերազմից հետո ռուսները գրավեցին Կարսը, այն դար- ձավ առաջնակարգ պաշտպանական բերդ, իսկ Ալեքսանդրապոլի (Գյումրի) բերդը՝ իրե-

տանու պահեստարան: Այն ծառայել է նաև որ- պես զինվորական բանտ:

Հաջորդ վերջին կանգառը, Գյումրիի Վար- դանանց հրապարակն էր, որտեղ մեզ սպա- սում էր մեր յոթերորդ ընկերուհին, որը, չնա- յած առողջական խնդիրներին, հարսի օգնու- քյամբ միացել էր մեզ: Հույզերի ու պոթեկում- ների ինչպիսի՜ տարափ. հնարավոր չէր ներկա լինել ու չհուզվել այդ տեսարանից:

Վարդանանց հրապարակից էլ սկսվեց մեր ծանոթությունը մշակութային քաղաքի ման- րամասներին:

Եղանք Սուրբ Աննափրկիչ, Յոթ Վերք և Սուրբ Նշան եկեղեցիներում, ծանոթացանք նրանց պատմությանը, մոմեր վառեցինք մեր «բացակա» ընկերների հիշատակի համար, այնուհետև քայլելով Վարպետաց փողոցով՝ ծանոթացանք Հովի. Շիրազի, Ավ. Իսահակյա- նի, Միեր Սկրտչյանի թանգարաններին ու, վերջապես, մեր շրջագայությունն ավարտե- ցինք հայֆիլմի հայտնի կինոնկարի («Մեր մանկության տանգոն») նշանավոր բալկոնի («Վառեն-մարեն...») տակ՝ անուղակիորեն

շփվելով մեր մեծերի հետ:

Յոթ տասնամյակը վաղուց հաղթահարած համակուրսեցիներիս համար քաղաքում այդ- քան քայլելը չնայած հոգնեցնող էր, այնուա- մենայնիվ, մեր օրը հագեցած էր հետաքրքիր տեղեկություններով, ու հանդիպումը՝ կայա- ցած, ինչի համար ուրախ էինք բոլորս:

Տունդարձի ճանապարհին մեր գոհունա- կությունն ու շնորհակալությունը հայտնեցինք ONE WAY TOUR-ի կազմակերպիչներին ու մեզ ուղեկցողներին:

Օրվա ամենազվախված ձեռքբերումն այն էր, որ Արցախի կորստյան ցավը մեր հոգում ամբարած՝ կարողացանք ուժ գտնել ու հե- տաքրքիր ժամանակ անցկացնել մայր հայրե- նիքի պատմական վայրերում:

Կյանքի մայրամուտի շողերը հեծվից նշ- մարող համակուրսեցիներս խոստացանք այ- սուհետ ևս նման հանդիպումներ հաճախակի կազմակերպել:

Տա՛ Սատված:

Սուրբյա ՂԱԶԱՐՅԱՆ



ՊԱՏՄԱՐՆԱԳԻՏԱԿԱՆ

ՆՎԻՐՎԱԾ՝ ՎԱՆԻ ԹԱՎԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԵՊԱԳՐԵՐԻՆ

«Խալդյան մեծությամբ Արգիշտին՝ Սենուայի որդին, այս ամրոցը հոյակապ կառուցեց, հաստատեց Երեբունի անունը՝ ի հզորություն Բիայնիլի երկրի և ի սարսափ թշնամիների: Արգիշտին ասում է.- հողն ամայի էր: Ես հզոր մեծագործություններ կատարեցի այստեղ: Խալդյան մեծությամբ Արգիշտին՝ Սենուայի որդին, արքա է հզոր, արքա մեծ, տերը Տուշպա քաղաքի»:

Երեբունի-երևան հիմնադրման սեպագիր արձանագրությունը

Մեծությամբ 20-ին ԵՊՀ պատմության ֆակուլտետի ընթերցարահուն հնագիտության և ազգագրության ամբիոնի վիճակագրություն և առարկայի շրջանակներում կայացավ



«Վանի թագավորության գրավոր մշակույթը՝ ուշագրավ դասախոսություն՝ նվիրված Վանի թագավորության սեպագիր արձանագրություններին: Բանախոսությամբ հանդես եկավ «Երեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրենի պաշտոնակատար Վահե Սարգսյանը: Ներկա էին պատմության ֆակուլտետի ուսանողներ, Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի բարձր դասարանների աշակերտներ, պատմության ուսուցիչներ, թեմայով հետաքրքրվողներ: Ներկայումս ողջունեց ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնի վիճակագրության դասախոս, պ.գ.թ. Արսեն Գրիգորյանը, շնորհակալություն հայտնեց Վ. Սարգսյանին հրավերն ընդունելու համար: Բանախոսը հանգամանալից ներկայացրեց թեման, կարևորեց պատմահայր Մովսես Խորենացու դերը, որի հաղորդած տեղեկությունների շնորհիվ եվրոպացի գիտնականները Հայկական լեռնաշխարհի տարածքում սկսել են հետաքրքրվել սեպագիր արձանագրությունների ուսումնասիրմամբ և հայտնաբերմամբ: Բանախոսը տեղեկացրեց, որ մինչև 19-րդ դարը գիտական հանրությանը Հայկական լեռնաշխարհի սեպագիր արձանագրությունների մասին տեղեկություններ հայտնի չէին: Վ. Սարգսյանը նշեց՝ սեպագիր գրային համակարգը ստեղծվել է զարգացում է ապրել Միջագետքում՝ Շուսերում, Բաբելոնում: Հայկական լեռնաշխարհում դրանք կիրառվել են Ք.Ա. 9-րդ դարասկզբից՝ ուրարտական թագավորների կողմից: Նշեց նաև՝ գրի կիրառումն այդ ժամանակ պայմանավորված էր պետականության կայացմամբ: Եվրոպայում, քննարկելով Խորենացու

երկի ճշտությունը, եվրոպացիները որոշում են ստուգել հետևյալ իրողությունը, որ հաղորդում է Պատմահայրը՝ պատմելով Ասորեստանի թագուհի Ծամիրամի գործունեության մասին Վանում Արայի գոհվելուց հետո. «...Իսկ քարածայրի բոլոր երեսը հարթելով, ինչպես գրչով հարթում են մեղրամոմը, վրան շատ գրեր գրել տվեց, որոնց տեսքը միայն բոլորին զարմացնում է: Եվ ոչ միայն այստեղ, այլև Հայոց աշխարհում շատ տեղերում արձաններ կանգնեցրեց և նույն գրերով իր մասին ինչ-որ հիշատակ հրամայեց գրել, և շատ տեղերում նույն գրով սահմաններ էր հաստատում» (Մ. Խորենացի «Հայոց պատմություն»։ Երևան 1981թ.: Գիրք առաջին, գլուխ ԺԶ, էջ՝ 121):

Նշված փաստը հաստատելու նպատակով 1826թ. հեսսենցի գիտնական Ֆրիդրիխ Շուլցը (1799-1829թթ.), որն այն ժամանակ Հեսսենի համալսարանի դասախոս էր, գործուղվել է Վան Ֆրանսիայի «Ասիական ընկերության» կողմից՝ հայագետ Անտուան-ժան Սեն-Մարտենի առաջարկով: Նա եվրոպացի առաջին գիտնականն էր, որ սկսեց ուսումնասիրել ուրարտական սեպագրերը:

Ֆ. Շուլցը հայտնաբերել է ընդօրինակել է 42 սեպագիր արձանագրություններ: Ցավոք, նրա հետազոտությունները մնացին անավարտ, քանզի քուրդ ցեղապետներից մեկի հրամանով 1829թ. դեկտեմբերին Ֆ. Շուլցը և իր ուղեկիցներն սպանվեցին Ջուլամերիկի շրջանում: Նրա գիտական հետազոտությունները հրատարակվել են հետմահու՝ Փարիզում լույս տեսնող «Journal Asiatique» («Ասիական հանդես») 1840թ. 9-րդ համարում՝ «Վանա լճի և նրա շրջակայքի մասին հիշողություններ» վերնագրով: Սա դեռևս անընթեռնելի Վանի



նականում նամակներ են՝ կնքված մանակագիր թագաժառանգի կամ այլ բարձրաստիճան անձի կողմից: Ուշագրավ է, որ որոշ սեպագիր արձանագրություններ տեղեկություն են տալիս արքաների՝ ռազմարվեստով կամ սպորտով զբաղվելու մասին: Օրինակ, Սղզայից գտնված արձանագրությունում նշվում է. «Խալդյան զորությամբ Սենուա Իշպուհնորդին ասում է. հենց այս տեղից Արծիբեհի անունով մտուզը Սենուայի տակ ցատկեց քսաներկու կանգուն: Սենուան ասում է. ով այս արձանագրությունը տեղահանի, թող ոչնչացնեն իսրայիլ, Թեյշեբան, Շիվմին նրան ընտանիքն (ու) ժառանգությունն արևի տակ»: Մեկ այլ արձանագրություն է կրգիշտի II արքայի նետածոթյան մասին է:

Ներկայացվեցին նաև Վանի թագավորության արքաների տարբերությունները, կրոնապաշտամունքային, շինարարական, ռազմական նվաճումների մասին վկայող արձանագրությունները: Վերջում ներկայացրեց հարցեր ուղղեցին բանախոսին, եղավ որոշակի քննարկում թեմայի վերաբերյալ:



սեպագիր արձանագրությունների մասին առաջին ամբողջական վկայություններ էր եվրոպայում հրատարակված: Ֆ. Շուլցի հետազոտություններն ազդարարեցին ուրարտագիտության արշալույսը, և մի շարք ակնավոր գիտնականներ՝ Ստանիսլավ Գյուլար, Արչիբալդ Սեյս, Քերոլվե Պատկանյան, Կ.Ֆ. Լեման-Յաուպտ ևն, ծեռնամուխ եղան քիմիական արձանագրությունների հետազոտությանը:

Փաստորեն պատմահայր Խորենացին դեռևս 5-րդ դարում հստակ գանազանում և թվագրում էր ուրարտական

ՇԵՆՔԱՎԻԹ ՆԱԿԱՅՐ-ԹԱՆԳԱՐԱՆ

Մոտ 5000 և ավելի տարիներ առաջ Հրազդան գետի ձախափնյա ոչ բարձր բլրակի վրա հիմնադրվել է մի բնակավայր, որի նախնական անվանումը հայտնի չէ: Բնակավայրի ավերակները, որ հայտնաբերվել են 100 տարի առաջ և բացվել 1936 թվականից սկսած, գտնվում են Երևանի Շենքավիթ վարչական շրջան-թաղամասում: Այս պատճառով հնավայրը կոչվում է «Շենքավիթ» պատմահնագիտական արգելոց-թանգարան: Խորհրդային տարիներին հնավայրի հարևանությամբ Հրազդան գետի վրա կառուցվեց Երևանյան լիճը: Վաղ-բրոնզեդարյան այս բնակավայրում, ըստ պեղումներ կատարող գիտնական Հակոբ Սիմոնյանի, 5-10 հազար մարդ է բնակվել 1000 և ավելի տարի: Մոտ 4000 տարի առաջ՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբին, ըստ գիտական 3 վարկածի՝ էլյուզիական փոփոխությունների արդյունքում սկսված աղուտացման երևույթի, ներփակ տնտեսական հարաբերությունների կամ էթնիկական տեղաշարժերի ու ներխուժումների պատճառով բնակավայրից մարդիկ հեռացել են: 1924 թվականին, երբ պատահաբար գտնվել է բնակավայրը, նրա բուն սահմաններն ավելի լայն են եղել՝ մոտ 7 հա, սակայն դրանց կեսից ավելին ենթարկվել է կառուցապատման, իսկ բնակավայրը շրջափակած քարե պարսպի քարերն օգտագործվել են որպես շինքար:



1968 թվականին ստեղծվել է «Երեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի «Շենքավիթ» մասնաճյուղը: Տարածքում առաջին պեղումները 1936-38թթ. կատարել է ճանաչված ու հայրենասեր գիտնական Եվգենի Բայբուրդյանը: Հենց այս պեղումների շնորհիվ էլ սկզբից է դրվում հնագիտական մի մշակույթի համակարգված ուսումնասիրության, որը Բայբուրդյանն անվանել է «Շենքավիթյան»: Այսպիսով, Շենքավիթ հնավայրը դարձավ մի ամբողջ մշակույթի անվանադիր հուշարձան: Բայց այդ ժամանակ հայրենասեր մարդիկ դառնում էին ստալինյան բռնաճնշումների զոհ: Նշանավոր գիտնականին աքսորում են համակենտրոնացման ճամբար, որտեղ էլ կնքում է իր մահկանացուն: Բայբուրդյանի «Հնագույն մշակույթների հերթագահությունը Հայաստանում» ըստ հնագիտական նյութի» աշխատության մեջ հեղինակը հիմնավորում է նկարագրում է Շենքավիթյան մշակույթը: Համաձայն աշխատության՝ հնավայրը բացահայտվել է դեռևս 1924-1925 թվականներին, սակայն լայն ուսումնասիրություններ չեն իրականացվել: Հետագայում տարածքում պատահաբար հայտնաբերվել է կոտրված աման և կավե օջախի մնացորդներ: Դրանից էլ նշվել է 1936 թ. Հայաստանի պատմության թանգարանի աշխատակիցների կողմից տարածքն ուսումնասիրվել է, իսկ Պատմական հուշարձանների պահպանության պետական կոմիտեն 1936 թվականին հունիսի 14-ից սկսեց պեղումներ իրականացնել: Հեղինակը Շենքավիթյան մշակույթն անվանում է նաև Կուր-Արաքսյան, Վաղ-Անդրկովկասյան մշակույթ:

1958 թվականից Շենքավիթի տարածքում հնագիտական նոր ուսումնասիրություններ ու պեղումներ են սկսվել հնագետ Սանդրո Սարգսյանի ղեկավարությամբ: 1958-1980 թվականների ընթացքում նրա կողմից պեղվել է բնակատեղիի պահպանված հատվածի կենտրոնական մասը: Ըստ տեղեկությունների՝ նրա շնորհիվ է փրկվել հնավայրի ներկայիս պահպանված հատվածը և չի ենթարկվել կառուցապատման:

2000 թվականի օգոստոսից տարածքում պեղումներ և ուսումնասիրություններ են կատարվել հայ-ամերիկյան միացյալ հնագիտական արշավախմբի կողմից՝ հնագետ Հակոբ Սիմոնյանի ղեկավարությամբ: Այժմ հնավայրի պահպանված հատվածում բացվել են կլոր ու քառանկյուն հիմքեր ունեցող կացարանների ներքին հատվածները և նեղլիկ ու թեք փողոցները: Պեղված նյութերի որոշ մասն այսօր գտնվում է նաև Երևան քաղաքի և Հայաստանի պատմության թանգարաններում:

«Շենքավիթ» հնավայրի տարածքում գործող թանգարանի հավաքածուն ներառում է պաշտամունքային իրեր՝ օջախներ, զոհասեղաններ, հեռակներ, ճրագներ, ձկան արձանիկներ, ինչպես նաև կնոջ, տղամարդու, թռչունի, խոյի, ցուլի արձանիկներ, քարե, ոսկրե աշխատանքային գործիքներ՝ կացիններ, աղորիքներ, սանդեր, գուրգեր, սանդեր, իլիկի գլուխներ, նետասլաքներ, բրոնզե զարդեր՝ օղեր, ապարանջաններ, քորոցներ և այլն: Հավաքածուի մաս է կազմում սև, փայլեցված, կարմիր, գորշ խեցեղենը, որը փորագրված է եղել երկրաչափական նախշերով կամ կենդանիների՝ թռչունների, այծի, ձիու, եղջերուի պատկերներով: Այժմ հնավայրի տարածքում գործում է նաև ուսումնական պեղավայր դպրոցականների համար:

ՓՐԿՎԱՆՆԵՐԸ

ՄԵԾ ԱՐԵՏԻՑ ՄԵՎ ՏԱՐԻ ԱՆՑ



Մեծ տարի է անցել 2023-ի Սեպտեմբերի 19-ի դաժան մարտերից եւ դրան հաջորդած դժբախտություններից մեկից, որ պատուհասեց արցախցիներին...

Սեպտեմբերի 25-ը դարձավ արցախցիների սեւ օրերից մեկը եւ ավելացավ սեպտեմբերյան չարաբաստիկ դեպքերի ցուցակում: Իսկ այսօրվանից հրաշքով փրկվածների համար այդ ամառնափվը թերեւս դարձավ նրանց երկրորդ ծնունդը մատնանշող օր, որի մասին ոմանք չեն էլ ուզում հիշել, իսկ ոմանք էլ մոռանալ չեն տալիս չսպիացող վերքերը, վնասվածքները եւ ցավը:

Դավիթ Գրիգորյանը ծնվել է 1990թ. օգոստոսի 27-ին Ստեփանակերտում: Սովորել է Ավ. Իսահակյանի անվան հ.10 միջնակարգ դպրոցում, հետո ուսումը շարունակել Արհեստագործական ուսումնարանի «Ավտոմոբիլային տրանսպորտի շահագործում եւ նորոգում» բաժնում: 2009-2011թթ. ծառայել է ԱՀ ՊԲ շարքերում՝ որպես պարտադիր ժամկետային զինծառայող: Ձինվորական ծառայությունն ավարտելուց հետո աշխատանքի է ընդունվել «Հայր եւ որդի Երեմյաններ»՝ զինվորների համար սնունդ մատակարարող ընկերությունում, աշխատել որպես պահեստապետի օգնական: 2019թ.

դեկտեմբերին ամուսնացել է: Որդին՝ Արսենը, ինչպես հայրը, լույս աշխարհ է եկել հայրենիքի համար ծանր ժամանակաշրջանում. ծնվել է 2020թ. հոկտեմբերի 16-ին, երբ Արցախը կրկին պատերազմի մեջ էր, իսկ հայրը գրառված էր քիկունքի ապահովմամբ ու բանակին սնունդ մատակարարելու գործով:

2020թ. պատերազմից հետո, երբ արդեն Արցախը մասամբ կորսված էր, Դավիթը որոշեց, որ պետք է մնալ Արցախում եւ ամուր պահել եղածը, որպեսզի կորցրած տարածքների ազատագրումը չուշանա: 2021թ. մտավ ծառայության ՊԲ ՅՕՊ-ում՝ որպես պայմանագրային զինծառայող: Սակայն դեպքերը այլ սցենարով էին զարգանում, Արցախի բռնազավթված տարածքների ու բնակավայրերի ազատագրումը գնալով անհավանական էր դառնում, իսկ Արցախի գոյությունը՝ կասկածելի: 2022թ. դեկտեմբերին Արցախը շրջափակվում է՝ բնակչությանը գրկելով կեցության համար անհրաժեշտ տարրական պայմաններից: Ինչպես բոլորը, Դավիթը նույնպես ստիպված է լինում կանգնել հացի հերթերում, սնունդ հայթայթել, իսկ ամենադժվարը՝ երեխային ապահովել անհրաժեշտ սննդով, վիտամիններով:

2023թ. Դավիթը հրետանու ծառայող էր: Սեպտեմբերի 19-ին, երբ թշնամին լայնամասշտաբ հարձակման ենթարկեց Արցախը, Դավիթը գտնվում էր ծառայության վայրում: Ձինակից ընկերների մեծ մաս էլ կատարեց իր առջև դրված մարտական առաջադրանքները՝ դեռ չզիտակցելով, որ գուցե դա Արցախի Հանրապետության բանակում ծառայելու վերջին առաջադրանքներն են: Սակայն գիտակցումը շատ չուշացավ: Շուտով հրաման ստացվեց, որ զենքերը պետք է հավաքեն ու հանձնեն. տասնամյակներ իր հետությամբ աչքի ընկնող Արցախի Պաշտպանության բանակը պետք է լուծարվեր:

«Այլեւս իմաստ չկար մնալ Արցախում, քանի որ բանակ ու պաշտպանություն չկար: Հասկանում էինք, թե ինչ ողբերգական հետևանքների կհանգեցնեն մնալն, ու ճանապարհի բացման լուրն իմանալով՝ սեպտեմբերի 25-ին պատրաստ ենք լինում դուրս գալ, մինչդեռ վառելիքի

խնդիր կար, պետք է լրացնեինք մեր ունեցած բեռնափակ սակավ պաշարը, որպեսզի հերիքեր ու ճանապարհին չմնայինք: Աներձագիս հետ որոշում ենք գնալ Հայկազուկի բեռնափակ պահեստ՝ հույս ունենալով, որ կկարողանանք բեռնափակ վերցնել, չնայած գիտեինք, որ մեծ հերթեր են լինելու: Հասանք ու տեղում հերթ կանգնեցինք: Հենց պահեստի վրա էինք, երբ հանկարծ օդում սուրոց լսեցի, շատ ծանոթ սուրոց, ասես արկի ձայն լիներ, մի պահ մտքովս անցավ, որ մի՞թե նորից... Հետո գլուխս բարձրացրի վերեւ մայելու, ու հանկարծ հողը ասես թե ոտքերիս տակից գնաց... Ահավոր դողոյուն լսվեց, չհասկացա, թե ինչ էր: Ձեռքերով փակել էի գլուխս ու դեմքս: Երբ բացեցի աչքերս, հասկացա, որ բեռնափակի տարայի մեջ եմ, մարդիկ նույնպես հայտնվել են տարայի մեջ, կրակ է ու տեսա երկինք բարձրացող կրակի բոցերը: Վառվում ենք: Պետք էր դուրս գալ ու մարդկանց հանել: Տեսա, որ կողքիս երկաթյա ամրան կա, բռնեցի, որ բարձրանամ, ընկա: Կրակը շատանում էր, շնչելը՝ դժվարանում, վառվող մարդիկ գոռում-գոռում էին, շորերս վառվում էին... Իմ մեջ ուժ գտա ու երկրորդ անգամ փորձեցի ամրակից բռնելով բարձրանալ: Դուրս եկա: Ձեռքերս ու ոտքերս վառվում էին: Կարծում էի, թե միայն այդքանն է, բայց այդպես չէր, այրվածքներս ավելի շատ էին, ամբողջ մարմնովս մեկ: Աներձագիս կողքեր էի: Կանչելն անիմաստ էր, արդուն մեջ անհնար էր լսել: Տեսա, որ շուրջս բազմաթիվ վիրավորներ կան, բոլորին շտապ օգնություն էր պետք: Մի մեքենա, վիրավորներով լցված, ուզում էր շարժվել դեպի հիվանդանոց, կանգնեց ու ինձ էլ վերցրին՝ մի կերպ խցկելով ինձ ներս: Վիրավորների մեջ կանայք էլ կային: Կիսանստած, կիսապառկած ու կիսականգնած՝ մեծ դժվարությամբ շրջանցելով անկարագրելի խցանումները, հասանք Ստեփանակերտ: Բայց Հանրապետական հիվանդանոցին մոտենալ չէր լինում, ահավոր խցանում էր, մի կողմից վիրավորներ տեղափոխող շտապօգնության մեքենաներ կային, մյուս կողմից՝ բնակչության գաղթ ու քաղաքացիական անձանց մեքենաներ: Լավագույն էլքը այդ պահին վարորդի կողմից մեզ «Արեւիկ» մանկական

բուժմիավորում տանելն էր, բայց ահագնացող ցավի ու համատարած քաոսի պայմաններում ես չգիտեի, թե որտեղ ենք: Շենքը գրեթե դատարկ էր: Առաջին հարկում մարդ չկար: Երկրորդ հարկում մեզ դիմավորեցին բուժքույրեր կամ գուցե բժիշկներ: Մեզ ջուր տվեցին, փորձեցին օգնել ինչով կարող էին՝ դեղերի ու լիարժեք բուժամօժանակազմի բացակայության պայմաններում: Ցավը ահավոր էր դառնում, իսկ որեւէ ցավազրկող դեռ չկար: Հեռախոսներիցս մեկը կորել էր: Գրպսումս ուրիշ հին հեռախոս ունեի, մի կերպ հանեցի ու գրեթե ռաշխատող մատներով համար հավաքեցի, անընդհատ կորչող կապի միջոցով կցկտուր հայտնեցի ընտանիքիս, որ հիվանդանոցում են: Գրեթե մեկ ժամ այդպես մնացի, իսկ վիրավորների հոսքը շատանում էր: Մահճակալներ չկային: Հետագա դեպքերն աղոտ են հիշում կամ ընդհանրապես չեն հիշում: Հիշում են, որ քաղաքացիական շորերով քույրեր կամ գուցե կանաչաբուսներ էին, չգիտեմ, սկսեցին մեկ-մեկ մոտենալ եւ օգնություն ցուցաբերել: Վերջապես ցավազրկող ստացա: Ձրքանցս էր եկել ու ինձ գտել: Հայտնեցին, որ աներձագու ողջ է: Հիշում են, որ այրված շորերս կտրատում էին, հագիցս հանում, այդպես գտան դրամապանակս ու տվեցին զրքանջիս: Գետնին ներքնակներ փռեցին, ինձ պառկեցրին, երեւի քնեցի: Հետոն չեմ հիշում, թե ինչպես են ինձ տեղափոխել Հանրապետական հիվանդանոց, իսկ օրեր հետո ուղղաթիռով հասցրել Երեւան: Դա գիտեմ ուրիշների պատմելով, քանի որ այդ դրվագը իմ հիշողությունից դուրս է եկել»,-պատմում է Դավիթը:

Դավիթը տեղափոխվեց Երեւան սեպտեմբերի 27-ին: Սկզբում նրան տեղավորեցին «Միքայելյան» բժշկական կենտրոնում: Բարեբախտաբար կինը հասցրել էր Դավիթի անձը հաստատող փաստաթղթերը Ստեփանակերտի հիվանդանոցում դեռ ամուսնու անկողնու կողքին, ինչը նպաստեց, որ Երեւանում գտնվող բարեկամները կարողանային Դավիթին շուտ գտնել, մինչեւ որ ընտանիքի անդամները կկարողանային հաղթահարել գաղթի ճանապարհը եւ օրեր հետո հասնել նրա մոտ: Դավիթի ավտոմեքենան մնաց

Արցախում՝ հայրենիքում ապրած կյանքի ու լավագույն հիշողությունների հետ:

Դավիթը ուներ 75 տոկոս այրվածքներ, խորը վերքեր, բարձր ջերմություն ու չէր կարող քայլել: Պառկած էր վերակենդանացման բաժանմունքում: Ասում է, որ բժիշկների հոգատար, ուշադիր աշխատելու շնորհիվ աստիճանաբար սկսեց բուժվել: Որոշ ժամանակ անց տեղափոխեցին Այրվածքաբանական միջազգային բժշկական կենտրոն, որտեղ ստացավ մասնագիտացված բուժօգնություն, իսկ ցավը սկսեց նվազել: Դեկտեմբերին դուրս գրվեց, բայց առջեւում բուժման երկար ճանապարհ կար անցնելու:

Դավիթը կնոջ, որդու, մոր եւ եղբոր հետ բնակվում էր Բյուրականի բարի մարդկանց տները մեկում, որտեղից շարաքվա մեջ 3-4 անգամ գնում էր Երեւան վիրակապերը փոխելու, բժշկական օգնություն ստանալու համար: Քիչ-քիչ սկսել էր քայլել, բայց ձեռքերի վիճակը լավ չէր, մատները կիսով չափ ամպուտացված են, ձեռքերով ինքնուրույն չէր կարող որեւէ բան անել: Աստիճանաբար վերքերն էլ լավացան: Դավիթը սկսեց ֆիզիոթերապիա ընդունել: Վեց ամիս Բյուրականում մնալուց հետո ընտանիքով տեղափոխվեց Երեւան, բնակվեց վարձակալած բնակարանում:

Երբ խոսք է գնում, թե ինչ խնդիրներ ունի Դավիթը, նա առաջնային խնդիր է նշում որեւէ աշխատանքի տեղավորվել չկարողանալը: Ձեռքերի շարժողականության խնդիր ունեցող արցախցու համար Երեւանում աշխատանք հազիվ թե գտնվի. այս պատասխանն է հաճախ ստանում նա աշխատանք փնտրելիս: Մինչդեռ հույսը չի կորցնում, որ իր համար էլ համապատասխան աշխատանք կգտնվի:

Պայթյունի զոհ դարձած ու տուժած բախտակիցներին հիշելով՝ Դավիթը խորը ցավով է խոսում այն ընտանիքների մասին, որ մնացել են առանց տան գլուխ, մշում, որ շատ ավելի վատ վիճակում մարդիկ կան, որոնց մաղթում է ուժ ու համբերություն: Իսկ իր նման իրաջքով ողջ մնացածներին նույնպես մաղթում է ուժ ու համբերություն, որպեսզի միաբանվեն, մի բան մտածեն. չէ՞ որ այսպես հավերժ չի մնա:

Մարզածներ

ԻՆՉՈ՞Ւ Է ՊԵՏԵ ԿԱՐԱՏԵՆ

Սպորտի զանազան ձևերի գոյության դեպքում շատ ծնողների համար դժվար է ճիշտ ընտրություն կատարել, թե իրենց երեխաներին որ ուղղությամբ տանել: Համեստ մարզիչները երբեք չեն գովաբանում հենց իրենց մարզաձևը, ի տարբերություն այն մարզիչների, որոնք շահախնդրորեն, այսպես ասած՝ «իրենցով են անում» շատ ծնողների ու մարզիկների, որոնք այնքան էլ տեղեկացված չեն այս կամ այն մարզաձևի մասին: Մարզական էջում հյուրընկալվող մեր մարզիչները սովորաբար խոսում են սպորտի եւ մարտարվեստների ընդհանուր օգտակարության մասին՝ ընտրությունը թողնելով ծնողներին ու մարզիկներին հարմարության վրա, պնդելով, որ բոլոր մարզաձևերն էլ օգտակար են, կարելի է ցանկություն ու ձգտում ունենալ մարզվելու համար: Որպես ծնողների համար համեմատաբար հեշտ կողմնորոշվելու ուղեցույց, ի մի բերելով մեր հարգելի մարզիչների պատասխանները, այնուամենայնիվ, այսօր կներկայացնենք 10 նախապայման, թե ինչու է պետք պարապել հենց կարատե մարտարվեստով: Բացառված չէ, որ առաջիկա համարներում կներկայացվեն այլ մարզաձևերի օգտակարության մասին պատմող հոդվածներ, մինչդեռ չնոռանանք, որ ամեն դեպքում ընտրությունը մնում է ծնողների վրա:

Սպորտի Կարատե մարտարվեստում մեծ ուշադրություն է դարձվում այս որակի վրա: Մեր ժամանակներում երեխաները սովոր են, որ իրենց ցանկությունները կատարվեն անմիջապես: Կարատեի մարզումների ընթացքում նրանք կսովորեն զարգացնել իրենց մեջ պատասխանատվությունն ու ինքնուրույնությունը:



Հաղորդակցվելու ունակություն Երեխան ձեռք կբերի նոր ընկերներ ընդհանուր հետաքրքրություններով, իսկ գույգերով պարապումները կզարգացնեն նրա մեջ ընկերությունը: Ֆիզիկական պատրաստվածություն Երեխաները ավելի շատ ժամանակ են ծախսում համակարգչի, հեռուստացույցի կամ պլանշետի վրա: Սպորտն օգնում է նրանց հե-

ռացնել ժամանակակից գերող այս գործիքներից եւ բարձրացնել աշխատասիրությունը, ինչպես նաեւ դրական ազդեցություն ունենալ ուսումնական գործընթացի վրա: Նպատակալացություն Բոլորը, ովքեր սկսում են զբաղվել կարատեով, ցանկանում են սեւ գոտի ձեռք բերել: Ուսանելով կարատեի մանկական բաժնում՝ աշակերտները սպիտակ գոտիներ կունենան: Ամեն անգամ բարելավվելով իրենց տեխնիկան՝ գոտիների գույները կփոխվեն, դրանով մեծացնելով ինքնավստահությունը իրենց եւ իրենց ուժերի հանդեպ, ինչն օգնում է հասնել նպատակներին: Ինքնազստահական Հաջողության հասնելու ձգտումը եւ ինքնավստահության աճը նվազեցնում են ինքնաքննադատումը: Ցածր ինքնագնահատական ունեցող երեխաները ուսուցման մեկնարկից որոշ ժամանակ անց դառնում են ավելի ինքնավստահ իրենց գործողություններում: Հարգանք Ժամանակակից մշակույթում քիչ ուշադրություն է հատկացված հարգանքին: Այս արվեստը ուսումնասիրելու համար սաները պետք է հարգալից վերաբերմունք ունենան ինչպես մարզչի, այնպես էլ իրար նկատմամբ: Բարի վերաբերմունք տարածայնություններ

րի նկատմամբ Այժմ ագրեսիվ պահվածքը հազվադեպ չէ: Շատերը կարծում են, թե կարատե երեխաների մեջ զարգացնում է բռնություն եւ ագրեսիա: Իրականում մանկական սպորտային խմբերն իրենց առջեւ նպատակ են դնում ուսուցանել հակամարտությունների խաղաղ լուծման եւ վեճերում ուժի կիրառումը կանխելու հմտություններ: Ուշադիր լինելու հմտություն Տեխնիկայի կիրառման ժամանակ հաջողության հասնելու համար սաները տարբեր հմտություններ կիրառելիս պետք է լսեն իրենց մարզչի խոսքն ու հրահանգները: Թիմում աշխատելու հմտություն Որոշ դասեր նախազգված են այնպես, որ դժվար է դրանք կատարել միայնակ, այնպես որ նրանք կսովորեն միասին մտածել եւ լուծել խնդիրը: Ընդհանուր զարգացում Կարատեն ընդլայնում է մտափորձը եւ օգնում է զարգանալ, բարելավում է ֆիզիկական պատրաստվածությունը, սոցիալական հարողակցությունը: Այս ամենը նպաստում է, որ երեխաները մեծանան առանց հոգեբանական անհանգստության եւ խնդիրների առաջացման:

ԲՈՒԺԱԿԱՆ

ՄԵՐՍՈՂ ՏԻՊՐԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆՆ ԱՇԽԱՏԵԼՈՒ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ



- Տիգրան, երկու խոսքով կներկայացնե՞ք, թե ինչ չինական մերսուոնը՝ ընթերցողների համար պատկերավոր լինելու համար:

- «Հինական մերսուոն» հասկացության մեջ մտնում են զանազան մեթոդիկաներ, որոնք կիրառվում են ոչ միայն լայն շրջանակ ունեցող հիվանդությունների բուժման և պրոֆիլակտիկայի համար, այլև նպաստում են օրգանիզմի հանգստությանը (ռելաքսացիային), ուժերը վերականգնելուն և սթրեսները հանելուն: Բոլոր այդ մեթոդիկաները կազմում են չինական բժշկության բաղադրուցիչ մասը: Հին չինական բժշկության մեջ նշվում են բազում հիվանդություններ, որոնց բուժման համար բուժիչ ղեղաբույսերին զուգահեռ՝ անհրաժեշտ է մերսուոն և գիմնաստիկա: Բուժման այդ մեթոդները համակարգվել են չինացի բժիշկների կողմից մոտ հազար տարի առաջ և այսօր կազմում են կիրառվող մերսուոն տեխնիկաների հիմքը: Կան չինական մերսուոն բազմաթիվ տեսակներ, մինչդեռ դրանցից ոչ բոլորն են կիրառվում զուտ բուժման նպատակով: Եթե փորձեք երկու խոսքով նկարագրել չինական մերսուոնը, ապա դա կետային մերսուոն է, որի օգնությամբ մերսուոնը ներագրում է այցելուի էներգետիկ ուղիների վրա:

- Ինչո՞ւ սկսեցիք զբաղվել չինական մերսուոնով:

Դեռ փոքր էի, երբ հարազատներս ինձ մոտ հայտնաբերեցին դրական էներգիա փոխանցելու, այսպես կոչված՝ տաղանդ: Պատահում էր, որ իմ հարազատներից որեւէ մեկը վատառողջ էր կամ գլխացավ ուներ, ես ընդամենը նստում էի նրա կողքին, և նրա ինքնազգացողությունը բարելավվում էր: Աստիճանաբար սկսեցի գիտակցել, թե ինչ է տեղի ունենում և մտածեցի, որ այդպես կարելի է շատերին օգնել, սակայն չգիտեի՝ ինչպես: Սկսեցի ուսումնասիրություններ կատարել էներգիայի հետ աշխատելու տարբեր մեթոդներով, ուսումնասիրեցի մարդու անատոմիան, մեկնեցի Երևան և մերսուոն դասընթացների սկսեցի հաճախել: Այնուհետև շատ կարևոր իրադարձություն տեղի ունեցավ իմ կյանքում. հրավեր ստացա մոսկվաբնակ պրոֆեսիոնալ մերսուոլ, մանուալ թերապետ և հրաշալի անձնավորություն Սամվել Մուրադյանից, որն առա-

ջարկեց սովորեցնել ինձ չինական մերսուոն յուրահատկությունները և հավելեց, որ ինձ մոտ նկատել է բնատուր տաղանդ, ինչը թույլ կտա ավելի հեշտ յուրացնել մերսուոն նրբությունները և անշուշտ՝ ի նպաստ դնել արցախցիների օգնության: Սկզբնական շրջանում զուգեցե անհրաժեշտ էր թվում այդ մտահղացումը, բայց ջանքեր չխնայեցիք և համապատասխան որակավորում ստանալով՝ 2015 թվականի մարտին Ստեփանակերտում բացեցի չինական մերսուոն սրահ ու սկսեցի օգնել իմ հայրենակից Արցախի բնակիչներին:

- Բժիշկ չլինելով՝ յուրացրել եք բժշկական արվեստի այդ բարդ ուղղությունը՝ մերսուոնը՝ իր նրբություններով: Կարճ ժամանակահատվածում բավականին հաջողությունների հասնելով մասնագիտության ոլորտում և Ձեր հրաշագործ ձեռքերով օգնելով տարբեր խնդիրներ ունեցող բազմաթիվ արցախցիներին՝ վայելում եք նրանց երախտագիտությունը, անկեղծ սերն ու հարգանքը: Իսկ մերսուոնը վերաբերվում է որպես աշխատանքի՞, թե՞ դա Ձեր կոչումն է:

- Անկեղծ ասած շատ են սիրում իմ զբաղմունքը, որը նաև հաճելի աշխատանք է ինձ համար: Պետք է նշեմ, որ հենց այս աշխատանքում գտա ինձ, զուգեցե դա իմ կոչումն է: Ինձ դուր է գալիս օգնել մարդկանց, աջակցել նրանց առողջ ապրելակերպին: Այցելուների հաջողություններն ինձ մոտ դրական լիցքեր են հաղորդում, ինչն էլ խթան է հանդիսանում իմ աշխատանքի համար:

- Տիգրան, Դուք 2016 և 2020 թվականների պատերազմների մասնակից եք: Ձեր հիմնություններն օգնե՞լ են Ձեզ ռազմի դաշտում:

- Այո, ռազմի դաշտում օգնում են այնպիսի հիմնություններ, ինչպիսին են զապաժանության դրսերը, ինչպես նաև մահվանը հանգիստ վերաբերվել կարողանալը:

- Ինչո՞ւ էր պայմանավորված 2022թ. աշնանը Արցախից Ձեր տեղափոխվելը Վրաստանի Բաթում քաղաք:

- Սթեյբլորտը փոխելու ցանկությամբ: Մտածում էի որոշ ժամանակ հանգստանալ ու կրկին վերադառնալ Արցախ: Չէի մտածել, որ այլևս հայրենիք վերադառնալու հնարավորություն չի լինելու:

րություն չի լինելու:

- Ուրախությամբ տեղեկացանք, որ առաջիկայում գալու եք Հայաստան և աշխատելու եք Երևանի «Մենուա» հյուրանոցի (Նար-Դոսի 121) սենյակներից մեկում: Ինչքա՞ն ժամանակ եք նախատեսում հատկացնել Երևանում մերսուոն սեսիոններ անցկացնելուն:

- Նախնական պլանավորում են շուրջ երեք շաբաթ: Կախված այցելուների գրաֆիկի ծանրաբեռնվածությունից՝ հնարավոր են փոփոխություններ:

- Ովքե՞ր կարող են մերսուոն ընդունել Ձեզ մոտ, հիմնականում ի՞նչ խնդիրներով և ի՞նչ տարիքի մարդիկ կարող են դիմել Ձեզ:

- Կարող են դիմել բոլոր նրանք, ում որ բժիշկները նշանակել են մերսուոն: Ինչպես նաև բոլոր ցանկացողները կարող են գրանցվել անվճար խորհրդատվության ինձ մոտ՝ տեղում պարզելու համար կարող եմք նրա հետ աշխատել, թե՛ ոչ: Մերսուոն մեջ չկան տարիքային և սեռային սահմանափակումներ: Կարող են մերսուոն բերել նաև երեխաների՝ սկսած 6 ամսականից:

- Արցախից բռնատեղանվելուց հետո շատերի մոտ առաջացել են տագնապներ, կրկնվող սթրեսային վիճակներ և հոգեսոմատիկ հիվանդություններ, որոնք ակտիվալու միտում ունեն սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Կարո՞ղ եք չինական մերսուոն միջոցով հանգստացնել ու նվազեցնել ախտանշանները մնալով դեպքերում:

- Պատահական չէ, որ հենց այս շրջանում են ուզում աշխատել Երևանում, և անել ինձանից կախված հնարավոր իմ հայրենակիցների համար մատչելի պայմաններ ստեղծելու և օգնելու համար: Բնականաբար որոշ հիվանդություններ միայն մերսուոն բուժել չի ստացվի, բայց ընդհանուր առմամբ վիճակը թեթևացնել հնարավոր է: Չնոռանալ, որ շատ բան կախված է հենց այցելուից, թե որքանով է նա ուզում դուրս գալ այդ վիճակից:

Բոլոր արցախցիներին ցանկանում են ձեռք բերել սեփական անկյուն, թեպետ ոչ հարազատ, բայց իրենցը, իսկ բոլոր հայերին՝ լինել միասնական:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Բարեգործություն

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» կատարած գործունեության մասին Արցախում, հատկապես Քաշաթաղի շրջանում, շատ են անդրադարձել: Հիմնադրամի ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախկին դեկան, Բերձորի պատվավոր քաղաքացի, Արցախյան ազատամարտին մեծ աջակցություն ցուցաբերած պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի գլխավորությամբ, շարունակում է աջակցել տեղահանված արցախցիներին: Արցախյան 44-օրյա պատերազմից հետո Քաշաթաղի շրջակայքում Բերձորում, հարևան Ներքին Սուս և Աղավնո գյուղերում շարունակում էին ապրել մեր հայրենակիցները: «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի», մինչև 2022թ. կեսերը, քանի Արցախն ամբողջովին շրջափակված չէր, կենցաղային տեխնիկա, սնունդ, հագուստ և այլ կարևոր իրեր էր հասցնում այս բնակավայրերի, Բերդաձորի, Ստեփանակերտի և այլ տարածքների կարիքավորներին: Դրան զուգահեռ նաև աջակցում էր ՀՀ-ում բնակություն հաստատած արցախցիներին: Աջակցում է նաև ուսանողներին ուսման վարձավճարներ տրամադ-

րելով: Հիմնադրամի աշխատանքները գնահատելով՝ բարեգործական ծրագրերին աջակցում են նաև միջազգային որոշ կազմակերպություններ: Այս օրերին Երևանում են Կանադայի «Գլոբալ Մեդիկ» կազմակերպության մերկայացուցիչները՝ Էրին ու Դեյվիդը, ովքեր «Գուր-



գեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին» հիմնադրամի նախագահ Գ. Մելիքյանի և հոգաբարձուների խորհրդի անդամ Մարատ Գրիգորյանի հետ սեպտեմբերի 29-ին այցելեցին Քաշաթաղի շրջանից տեղահան-

ված 5 բազմազավակ ընտանիք: Հիմնադրամի կողմից հատկացվեց Կանադայից ստացված մոր հագուստներ և նույն ընտանիքներին, իսկ «Գլոբալ Մեդիկ»-ի կողմից՝ սնունդ: Տեղահանված ընտանիքներից 4-ը մինչ 2020թ. 44-օրյա պատերազմը բնակվում էին Քաշաթա-

ղ եղել: Իսկ եկեղեցուց վերև պահպանվել են Ք. Ա. առաջին հազարամյակում գոյություն ունեցած հզոր ամրոցի ավերակները: Անճա Կարապետյան և Գագիկ Ադամյան ամուսիններն ունեն 4 երեխա: Նրանց ընտանիքը 2000թ. է Արտաշատից բնակություն հաստատել Միրիկում: Այժմ վարձով են բնակվում Երևանում: Բենիամին Կարապետյանն ունի 4 երեխա. այժմ բնակվում են Երևանում՝ Շերմի փողոցում վարձակալած տանը: Լիաննա Մանուկյանն ունի 6 երեխա, որոնցից 4-ը սովորել են Միրիկի միջնակարգ դպրոցում: Այժմ երեխաներից 3-ը դպրոցական են: 1998-ին Հրազդանից են տեղափոխվել Միրիկ: Այժմ վարձով բնակվում են Երևանում: Կարեն Բլբուլյան և Լաուրա Սարգսյան ամուսիններն ունեն 8 երեխա. բնակվում են Արմավիրի մարզի Ջրառատ գյուղում: Ավագ որդին՝ Սահակը, գինվորական է: Այժմ 9-րդ դասարանում սովորող Վիկտորյան 4 տարի սովորել է Միրիկի միջնակարգ դպրոցում, կարոտով է հիշում այդ երանելի օրերը: Քաշաթաղի շրջանի Ղազարապատ գյուղը գտնվում է Շալուա գետի աջակողմում, ժամանակին մտնում էր Մեծ Հայքի Արցախ նահանգի կազմում: Տարածքի բացառիկ բնակավայրերից է. մինչև

1918 թ. եղել է բացարձակ հայաբնակ՝ 4 կողմից շրջապատված մահմեդականներով բնակեցված նախկին հայկական բնակավայրերով: Գյուղի վերահայացման տարիներին Լիլիթ խաչատրյանն ամուսնու հետ բնակություն հաստատեցին այս գյուղում: Ունեն 6 երեխա: Լիլիթի ամուսինը զոհվեց դժբախտ պատահարից: Երեխաները ժամանակին սովորում էին Ղազարապատի դպրոցում: Սակայն 44-օրյա պատերազմի ընթացքում ընտանիքով տեղափոխվեցին Արարատի մարզ և բնակվում են Նորամարտ գյուղում: Տունը գնել են ՀՀ կառավարության կողմից հատկացված հավաստագրով: Ջավակներից 2-ը սովորում են Նորամարտի միջնակարգ դպրոցում, դուստրերից Սեդան՝ քոլեջում: Որդիներից Հայկ Սկրտչյանը հայոց բանակի զինվոր է: Աջակցություն ստացածները շնորհակալություն հայտնեցին, կարևորեցին Գ. Մելիքյանի և նրա ղեկավարած հիմնադրամի դերը, որ որոշ չափով մեղմացնում է իրենց հոգսերը: Հիմնադրամի աշխատանքից գոհ էին նաև կանադացի մեր հյուրերը: Գ. Մելիքյանն ասաց՝ մշտապես պատրաստ է աջակցել արցախցիներին հնարավորությունների սահմաններում:

Ջ. ԸՈՒՅՆԱՆ



ԱՐՅԱՆԻ ԲԱՆԱՔՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ

ԱՍՈՒՅԹՆԵՐ

Երջանկահիշատակ Աղեյա (Արշալույս) Սարգսյանը ծննդով Արցախի Մարտունու շրջանի Պառավաթունք գյուղից էր: Ավարտել էր Շուշիի մանկավարժական ուսումնարանը, ապա՝ Հայաստանի պետական մանկավարժական ինստիտուտի դպրոցական բաժինը: Հաստատվել էր Արևմտյան քաղաքում: Որպես ուսուցիչ աշխատել է Արևմտյան քաղաքի դպրոցներում, նաև՝ քաղաքի արհեստագործական ավագ դպրոցում դասավանդել է ասեղնագործություն: Ուներ ժողովրդական վարպետի կոչում: Տիրապետում էր կար ու ձևի, ասեղնագործության, ժանյակագործության, շյուղագործության, հեյլուսագործության և այլ ձեռքի աշխատանքների: Նրա ստեղծագործական տաղանդը դրսևորվում էր նաև գրական ժանրերում: Գրում էր պատմվածքներ, բանաստեղծություններ, նաև՝ երգեր: Զբաղվում էր բանահավաքչությամբ, ազգագրությամբ, ուներ տպագրված գրքեր: Հաճախակի այցելում էր Արցախ և շրջում գյուղերով՝ ազգագրական նյութեր հավաքելու: Տպագրվում էր «Լուսարար»-ում: Ավելին՝ «Լուսարար»-ը էջեր էր տրամադրում շնորհաշատ վարպետին: Բացել էր «Հմուտ ձեռքեր»-ի հեռակա խմբակ, որտեղ նա կար ու ձևի, ձեռագործության դասեր էր տալիս: «Լուսարար»-ը հնարավորության սահմաններում աջակցում էր տաղանդավոր վարպետի ստեղծագործական աշխատանքի հանրայնացմանն ու տարածմանը, նրա ձեռագիր գրքերի համակարգչային շարվածքը նույնպես կատարվել է «Լուսարար»-ի խմբագրությունում: Բնականաբար մեր փոքրիկ խմբագրակազմը նվեր է ստացել նրա գրքերը: Ցավոք, բռնի տեղահանման հետևանքով «Լուսարար»-ի արխիվը մնացել է Ստեփանակերտում: Եվ Աղեյա Սարգսյանի ստորև ներկայացվող բանասիրական նյութերը վերցրել ենք համացանցից:

**Արցախի սուրբ, «կոշտ» բարբառը**  
**Եկեք պահենք անարատ, Իմաստաշատ բառուբանը**  
**Դարեր տանենք անաղարտ:**

**Պահենք նրան աչքի նման, Մեր հոգու պես զգայուն, Արդար հնչող երգի նման**  
**Մեր բարբառը՝ մնայուն:**

1. Տանը հաց ու շոր վրեր ճարվից, կես խանրա: - Տանը հաց ու շոր որ գտնվեց, կես խանրա:
2. Տոն քրնդողեն տոն չինի: - Տոն քանդողին տոն չի լինում:
3. Հուկեր կյուլան փախչի, արչեն ճյանգը կընգնեն: - Ով որ գայլից փախչի, արջի ճանկը կընկնի:
4. Կուռի խոխան մորը ծուլներեն ա ցավ տամ, մեծը՝ սըրտեն: - Փոքր երեխան մոր ծնկներն է ցավացնում, մեծը՝ սիրտը:
5. Կարթած մարթը տուզնը չի մնալ: - Ուսումնառած մարթը սոված չի մնալ:
6. Ուջաղեն մոխերը քամուն չըն տալ: - Օջախի մոխիրը քամուն չեն տալ:
7. Շունը հըջելու հետն ըն պահում: - Շունը հաչելու համար են պահում:
8. Շանը այունին քշտեն աղվես չի կենալ: - Շան բնի մոտ աղվես չի մնալ:
9. Նախշուն կընգանը իրեսան պաչի, կեշին՝ ծերբան: - Սիրուն կնոջ երեսից պաչիր, տգեղի՝ ծերբից:
10. Մեղավերեն լուզուն կարծ կըին: - Մեղավորի լեզուն կարծ կլինի:
11. Նըլբանդին ծին պեպեգ կըին: - Պայտարին ծին բոբիկ կլինի:
12. Շընըհաչոցն էլ փեշակ ա, վրեր սըվերիս: Շան հաչոցն էլ արհեստ է, որ սովորես:
13. Մինչև պած չինի, պող չի տեռնալ: Մինչև կայծ չլինի, պող չի դառնալ:
14. Նեղ օրվա ումբըր կարծ կըին: Նեղ օրվա կյանքը կարծ կլինի:
15. Մերուցք չըս տեսալ, մերուցքաման էլ չը՞ս տեսալ: - Մածուն չես տեսել, մածնաթաթախ աման էլ չե՞ս տեսել:
16. Թան չըս տեսալ, քընըթաթախ քսակ էլ չը՞ս տեսալ: - Թան չես տեսել, թանաթաթախ

17. Միասուր օտելը հավաս ա, վեռը բորելը պրտոխաս: - Մասուր ուտելը հավաս է, քամակը բորելը՝ պատուհաս:
18. Ճողպուրը պատան տաս, նըստա չի կենալ: - Պոպոքը պատից տաս, չի կաչի:
19. Մտքունտ վրեր տեղ ինի, սարեր շոռ կտաս: - Մտքիդ որ լինի, սարեր շուռ կտաս:
20. Կծեզը վրեր ետա տամ, էլ փռնվում չի: - Կծիկը որ հետ է տալիս, էլ չի բռնվում:
21. Հմաշխուտ կնեգը տղա չի պիրում: - Ամաշխուտ կինը տղա չի բերում:
22. Ծոխտ հավա թառեն, ճոխտ ծուն վեռեն: - Ջուխտ հավա թառին, ջուխտ ծուն՝ քամակին:
23. Եղընը կտրած տեղը վրեր կընկնի: - Եյուղը կտրած տեղը կընկնի:
24. Յա տոնս, յա կտորս: - Կամ տունս, կամ կտորս:
25. Հարամ հաց օտողը երկան ապրել չի: - Հարամ հաց ուտողը երկար չի ապրի:
26. Համ վնաս, համ՝ տնագ: Եվ վնաս և տնագ:
27. Կրակն ու քյուլաշը մին տեղ պահել չըն: Կրակն ու ծղոտը իրար մոտ չեն պահի:
28. Կյարմուր խնծորին քարավ կտան: - Կարմիր խնծորին քարով կտան:
29. Կաղնուն տակը վրեր քանդիս, կաղենը շողա՞ կըին: - Կաղնու տակը որ փորես, կաղին որտեղի՞ց կլինի:
30. Լաչառեն օխտը լեչակ կըին: - Լաչառին յոթ լաչակ կլինի:
31. Հանց տոտ ասե, վրեր դորթը կոխկեն պըպըզի: - Այնպիսի սուտ ասա, որ ճիշտ կողքին պազի:
32. Եծին քոսուտը ճիրին երե ակնան ճյուր կըլնեն: - Քոսուտ այծը ջրի վերին ակնից ջուր կլնի:
33. Յըթմին ճակատը պենդ կըին: - Որթի ճակատը պինդ կլինի:
34. Սուրբա թիքյան քաղցր կըին: - Առաջին պատառը քաղցր կլինի:
35. Աշկը ուրան ըըջին ա լյուս տամ: - Աշքը իր առաջն է լույս տալիս:
36. Առանց խոխա տոնը տերտակ կըին: - Առանց երեխա տունը դատարկ կլինի:
37. Առանց խոխա տոնը՝ ճըրատած ճեղաց ա: - Առանց երեխա տունը անջուր ջրաղաց է:
38. Անկոչ դոնաղը շանա բեթար ա: - Անկոչ հյուրը շնից կատար է:

39. Աղը կերած կաշին վեռել չի: - Աղ կերած կաշին չի հոտի:
40. Ըստըծու պահած կյանը կյուրը օտել չի: - Աստծո պահած գառը գայլը չի ուտի:
41. Կնեզըս մըռեմե, մինն էլ կճարիմ, իմար վեր մըռեմե, շողա՞ ճարիմ: - Կինն որ մեռնի, մեկն էլ կճարեմ, մայրս որ մեռնի, որտեղի՞ց գտնեմ:
42. Խոխան մինչև լաց չինի, մարը ծեծ չի տալ: - Երեխան մինչև լաց չլինի, մայրը ծեծ չի տալ:
43. Կրակեն յոտան յեղ չըն ասե: - Կրակի վրա յուղ չեն լցնի:
44. Ա կոծ քեզ ասիմ, ա կուլա տու սկաց: - Այ կուծ, քեզ ասեմ, այ կուլա, դու լսիր:
45. Վարթը սիրողը փոշն էլ կսիրի: - Վարդ սիրողը փուշն էլ կսիրի:
46. Էշը թըկելավ ճյուրե չի տըռնալ: - Էշը ծեծելով ջորի չի դառնալ:
47. Յըղծուվեն խաթրու կուբավերեն կոթան պաչում ըն: - Ձվածեղի խաթր թավալի կոթից պաչում են:
48. Մարթը ուրուշու մոքյտաջ չինի: - Մարդ ուրիշից կախված չլինի:
49. Մին ծերբավ երկու ծմերուկ չըն փըռնել: - Մի ծերբով երկու ծմերուկ չեն բռնի:
50. Մին ծերբը՝ են մինին մոքտաջ չինի: - Մի ծերբը են մյուսից կախված չլինի:
51. Թայրի ըղնողը օխտը տեղ կուկուզ կանե: - Վազողը յոթ տեղ կպպզի:
52. Թայրի ըղնողը տղա չի պիրիլ: - Վազողը տղա չի բերի:
53. Կյետը հասծվեջ փոխկերթըտ եր մեր քաշիլ: Գետը չհասած՝ փոխկերթը մի բարձրացրու:
54. Հըրսընքանը ետը նըղարա չըն թուտ: - Հարսանիքից հետո դիող չեն խփում:
55. Հըռնե մեռալը հըռնե ըն թաղալ: Անցած տարվա մեռելը անցած տարի են թաղել:
56. Արկաթը տաք-տաք կըթա-կին: - Երկաթը տաք-տաք կծեծեն:
57. Քամուն պերածը, քամեն կտանե: - Քամու բերածը քամին կտանի:
58. Եյուրը ըղնողը ճեղըն-ճեղըն կըղնե: - Ջուրն ընկած շյուղից էլ կըռնի:
59. Եյուրը ըղնողը փըրփորան էլ կըփռնե: - Ջուրն ընկածը փրփուրից էլ կըռնի:
60. Էշը՝ վրեր էշ ա, մեհետա ցեխն ըղնում: - Էշը որ էշ է, մի

- անգամ է ցեխն ընկնում:
61. Հըրևանեն հարթըն սերուն կըին: - Հարևանի հարսը սիրուն կլինի:
62. Վրեսկեն ըխարհարումն էլ պըծըպածի կանե: - Ոսկին աղբանոցում էլ կփայլի:
63. Խաչը տարը գիրավուր կանե: - Խաչին տերը գորավոր կանի:
64. Լվիթուն ըրա, ճյուրը քըցի: - Լավություն արա, ջուրը գցիր:
65. Աստուծ սարեն յեշում ա, ճյուրը տըղում: - Աստված սարին նայում է, ճյուրը դնում:
66. Աջ ծերբավ տվողը, ծեխավ յոր կոնե: - Աջ ծերբով տվողը ծախավ կվերցնի:
67. Տընագ, տընագ շտեղ ը՞ս քըղնում, քըղնումնում տընագ անիմ: - Տնագ, տնագ, ո՞ր էս գնում, գնում են տնագ անեմ:
68. Աշավըտ տո, ծեխավըտ՝ եր կալ: - Աջվիդ տուր, ծախավդ վերցրու:
69. Խալխեն տընագ ըրե, կըլոխըս եկավ: - Խալխին ծաղրեցի, գլուխս եկավ:
70. Հինչու վրեր վարիս, են էլ կըլընծիս: - Ինչ վարես, այն էլ կինծես:
71. Քոնը՝ քոն կըպիրի: - Քունը քուն կբերի:
72. Քոն իլածն ու մըռածը մին ա: - Քնածն ու մեռածը մեկ են:
73. Օղտեն ըսեցեն՝ խե՞՞ վըզըտ ծոռ ա, ասից՝ հինչը՞ս ա դյուզ... - Ուղտին հարցրին՝ ինչո՞ւ է վիզը ծոռ, ասաց՝ ի՞նչս է ուղիդ:
74. Տաշած քարը տափեն չի մնալ: - Տաշած քարը գետնին չի մնալ:
75. Յա աղն ա պակաս, յա՞ մաղը: - Կամ աղն է պակաս, կամ՝ մաղը:
76. Սև եզըն վրեր ընգավ, տընըկավորնեն շըտացեն: - Սև եզը ընկավ, դանակավորները շատացան:
77. Չորին նըհետ կեճն էլ ա էրում: - Չորի հետ թացն էլ է վառվում:
78. Համ նալեն ըս թխում, համ մեխեն: - Եվ նալին ես խփում և մեխին:
79. Համ հավըն ըս փշում, համ կածին: - Եվ սառածն ես փշում և տաքը:
80. Մին ծերբը ծափ չի տալ: - Մի ծերբը ծափ չի տալ:
81. Հարամը եկավ, հալալըս տարավ: - Հարամը եկավ հալալս տարավ:
82. Հիշտեղ պիրակե, ընդեղ կըկըտրե: - Որտեղ բարակի, այնտեղ կկտրվի:
83. Շունը՝ հոր, տոնը՝ հոր: - Շունը ո՞ւր, տունը ուր:
84. Էշը հինչա գյուղում, մոշը հինչա՞: - Էշն ինչ գիտի մոշն ինչ է:
85. Շանը տընս՝ փաղը եր կալ: - Շանը նայիր՝ փայտը վերցրու:
86. Շանը տես՝ միակը եր կալ: - Շանը նայիր, միակը վերցրու:
87. Էրալ չի՝ մրկալ ա: - Չի վառվել, մրկել է:
88. Ծի նըստելը մին այիթ, վրեր կյալը՝ մին: - Չի նստելը մի ամոթ է, ձիուց իջնելը՝ մի:
89. Կոծն ու կուլան մեր կըլխեն ա կտորվալ: - Կուծն ու կուլան մեր գլխին են կտորվել:

90. Հանց տոն չում չինալ, վրեր քընդվիլիս վա՞յ անիմ: - Այնպիսի տուն չեն չինել, որ քանդվելիս վա՞յ անեն:
91. Հանաքը՝ դըգյանակ ա տըռնալ: - Հանաքը դագանակ է դառել:
92. Կուռնուտըկերեն ծմերուկ ըն տիրալ: - Թևատակերին ծմերուկ են դրել:
93. Խիյարը տակնան ծոռ ա փըսալ: - Վարունգը արմատից ծուռ է աճել:
94. Խեթը պիժինեյիս շտե՞ղ ըս իլալ: - Խեթը բաժանելիս որտե՞ղ էիր:
95. Մին լյուն մին օղտ ըք չինում: - Մի լուն մի ուղտ եք սարքել:
96. Էշին պոզեր չի փսալ, ըսեցեն քոռակա: - Էշին պոզեր չի բուսել, ասել են՝ քոռակ է:
97. Ըրա ինծետե, սըվերի քըզետե: - Արա ինձ համար, սովորիր քեզ համար:
98. Ժամանակը մին անկին խազնա ա՞՞ գիդողեն հետե: Ամեն ժամ ուրան օժն օժն: - Ժամանակը մի անգին գանձ է իմացողի համար: Ամեն ժամ իր ուժն ունի:
99. Նամուսը տըվեն շանը՝ կերավուց: - Նամուսը տըվեցին շանը, չկերավ:
100. Էշը եր իլած՝ էշին շոռ ա կյամ: - Էշի վրա նստած՝ փնտրում է էշին:
101. Էշին հրսանեքը ըն ծեն տամ, ասումա՞՞ ճյուր կըլու ըն տանում: - Էշին հարսանիք են կանչում, ասում է՝ ջուր կըլու են տանում:
102. Արկաթը իմը, անձողը՝ իմը, քու թախկաթուխատ հինչի՞ս ա: Երկաթը՝ իմը, խանձողը՝ իմը, էլ չաղկաչուխը ինչի՞ս է:
103. Ես ասում ում՝ ես սկանում: - Ես ասում եմ, ես լսում:
104. Իրես տաս՝ աստառ էլ կոզի: - Երես տաս, աստառ էլ կուզի:
105. Եղն ու մեղրը շանը տվեն, կերավուց: - Յուղն ու մեղրը շանը տվեցին, չկերավ:
106. Եղը թանգյա, ծմոռը՝ իժա՞ն: - Յուղը թանկ է, յուղապատառը՝ էժա՞ն:
107. Եզըն եր ըն կըցնում, տակնան դանա օզում: - Եզը բարձրացնում են, տակից հորթ ուզում:
108. Կիժը կիժին տեսավ, ճակատը լընացավ: - Գիժը գժին տեսավ, ճակատը լայնացավ:
109. Կյառը՝ կյուլին պահ տվեն: - Գառը գայլին պահ տվին:
110. Բաղդաղ էլ շատ խուրմա կա, ինձ հի՞նչ: - Բաղդաղ էլ շատ խուրմա կա, ինձ ի՞նչ:
111. Աստառն էլ իրես աժի: Աստառն էլ երես արժե:
112. Արջը ուրան ահան կըկոռա՞: - Արջը իր ահից կգոռա:
113. Արջը ծըմական խռավալա, ծմակը՝ խաբար չի: - Արջն անտառից խռովեց, անտառը՝ անտեղյակ:
114. Սարերը ճռճալին տըռը, քուլերն ըն ճռճալ:

Շարունակելի

**ԼՈՒՍԱՐԱՐ**  
ԽՍՐԱԳԻՐ՝  
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝  
«Լուսարար»  
կրթամշա-  
կութային ՀԿ

✉ p.երևան,  
Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27  
E-mail: gorcstert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստու-  
գությունն ապահովում են հեղինակները: Թերթը  
ընթերցողների հետ գրագրություն վարելու պար-  
տավորություն չի ստանձնում:

Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում:  
Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:  
Տպաքանակ՝ 500  
Ստորագրված է տպագրությամբ՝ 04.10.2024թ.: